Արբիտրաժի և
հաշտարարության
հայաստանյան կենտրոն

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023

Պատրաստված է

Արբիտրաժի և
հաշտարարության
հայաստանյան կենտրոնի կողմից

Գործադիր ակնարկ

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը (ԱՀՀԿ) հիմնադրվել է 2023 թվականի մայիսին և կարճ ժամանակ անց սկսել իր գործունեության ակտիվ փուլը: Այն հիմնադրվել է Հայաստանում վեճերի այլընտրանքային լուծման (ՎԱԼ) և ներդրումային ոլորտը խթանելու առաքելությամբ: Օգոստոսի 18-ին ԱՀՀԿ-ն Արդարադատության նախարարության հետ կնքել է դրամաշնորհային պայմանագիր և 4 ամսվա ընթացքում հաջողությամբ իրականացրել սահմանված բոլոր աշխատանքները: Ավելին, այս ժամանակահատվածում ԱՀՀԿ-ին հաջողվել է կենսական պայմանավորվածություններ ձևավորել և ձեռք բերել արբիտրաժային լսումների և ընթացակարգերի համար անհրաժեշտ տեխնիկա: Կարևոր է նշել, որ ԱՀՀԿ-ն ստեղծել է Արբիտրաժային խորհուրդ, որում ներգրավված են ինչպես ազգային, այնպես էլ միջազգային լավագույն փորձագետներ: ԱՀՀԿ-ն ընդունել է նաև Արբիտրաժային կանոնների առաջին խմբագրությունը:

Հարկ է նշել, որ ԱՀՀԿ-ն ներգրավված է եղել 200-ից ավելի մասնակից ունեցող միջազգային միջոցառման կազմակերպման աշխատանքներում: Կենտրոնը նաև հաջողությամբ ռազմավարական գործընկերություն է հաստատել տարածաշրջանային և տեղական հաստատությունների և շահագրգիռ կողմերի հետ: ԱՀՀԿ-ն ԵԽ-ի հետ համատեղ կազմակերպել է 8-օրյա վերապատրաստման դասընթաց հաշտարարների համար, անցկացրել երկու եռօրյա վերապատրաստման դասընթացներ դատավորների, արբիտրների, իրավաբանների և բիզնես ոլորտի ներկայացուցիչների համար: Ավելին, ԱՀՀԿ-ն մշակել է արբիտրաժի մասին համապարփակ ձեռնարկ, կազմակերպել կլոր սեղան դատավորների, արբիտրաժային կենտրոնների և փաստաբանների հետ՝ առևտրային արբիտրաժի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա իրավական բացերի վերաբերյալ, որի արդյունքում ԱՀՀԿ-ն մշակել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ, իրականացրել մի շարք հանդիպում-քննարկումներ միջին և խոշոր ձեռնարկությունների հետ, իր գրասենյակում հյուրընկալել ուսանողներին և այլն:

Վերջին, բայց ոչ պակաս կարևոր ձեռքբերումը՝ ԱՀՀԿ-ին հաջողվեց նաև ունենալ բավարար տեսանելիություն և մեդիա լուսաբանում, որն իր հերթին նպաստում է արբիտրաժի և հաշտարարության զարգացմանը: Ավելին, ԱՀՀԿ-ն հստակ նշաձողերով մշակել է PR ռազմավարություն առաջիկա 3 տարիների համար: Այս ընթացքում Կենտրոնը մշակել է նաև ուսուցողական կարճամետրաժ, անիմացիոն

տեսանյութերի շարք, որոնք ներկայացնում են ՎԱԼ-ն ու դրա առավելությունները: Կենտրոնն ունեցել է հեռուստատեսային և ռադիո լուսաբանում, հրապարակել մամուլի հաղորդագրություններ, ակտիվ գործունեություն է ծավալել սոցիալական հարթակներում:

ԳԼՈՒԽ 1

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

I. ԱՀՀԿ Խորհրդատվական հանձնաժողովի առաջին նիստը Երևանում[1]



Նկար 1. AMCA-ի խորհրդատվական հանձնաժողովի առաջին նիստը

Սեպտեմբերի 5-ին Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի գրասենյակում տեղի ունեցավ Խորհրդատվական հանձնաժողովի առաջին նիստը: Հանձնաժողովը երկար ժամանակ մասնագիտական աջակցություն է ցուցաբերել Կենտրոնի ստեղծմանը և առանցքային փաստաթղթերի մշակմանը:

2021 թվականին ձևավորված հանձնաժողովի կազմում ընդգրկված են արբիտրաժային ոլորտի հայտնի և հեղինակավոր միջազգային և տեղական փորձագետներ:[2] Նրանք ունեն փորձ ICC, SCC, HKIAC և SIAC, ինչպես նաև այս ոլորտում հայտնի իրավաբանական ընկերություններում: Կոմիտեի անդամները և Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի ներկայացուցիչները քննարկում են անցկացրել Կենտրոնի արբիտրաժային կանոնների վերաբերյալ, մասնավորապես անդրադառնալով՝ ա) Կանոնների կիրառմանը, բ) Կենտրոնի, կողմերի և Արբիտրաժային տրիբունալի միջև գրավոր հաղորդակցության միջոցներին ու ընթացակարգերին, գ) ժամկետների սահմանման անհրաժեշտությանը, դ) Արբիտրաժային

Նկար. 2 AMCA-ի խորհրդատվական հանձնաժողովի կազմը

[1] The first meeting of the Steering Committee - AMC (amca.am)
[2] Ձևավորվել է Արբիտրաժային կենտրոնի Խորհրդատվական հանձնաժողովի կազմը (hetq.am)

խորհրդի լիազորությունների շրջանակին, ե) այլ թեմաների, որոնք անհրաժեշտ են կենտրոնի արդյունավետ գործունեության համար:

Քննարկման արդյունքում, Կենտրոնի արբիտրաժային կանոնների նախագիծը վերանայվել է՝ լավագույն միջազգային փորձի և Կոմիտեի հարգարժան անդամների առաջարկությունների հիման վրա:

II. <u>ԱՀՀԿ աշխատակազմի հավաքագրումը</u>

Բարձր մակարդակի ծառայություններ կազմակերպելու և արդյունավետ գործելու նպատակով գործունեության ազդարարման ամենասկզբում համալրվեց Կենտրոնի աշխատակազմը: Բաց մրցույթների արդյունքում աշխատանքի են հրավիրվել ամենահամապատասխան մասնագիտական պատրաստվածություն ունեցող լավագույն թեկնածուները: Կենտրոնի կազմակերպական կառուցվածքը հետևյալն է.



Սակայն, հաշվի առնելով ծանրաբեռնվածությունը և աշխատանքի առանձնահատկությունները, ներգրավվել են նաև փորձագիտական ռեսուրսներ, մասնավորապես՝ սոցիալական մեդիա մարքեթինգի մասնագետ և միջոցառումների մենեջեր: Աշխատակազմի բոլոր անդամների համառոտ կենսագրականները հասանելի են Կենտրոնի կայքում[3]:

[3] Մեր մասին (amca.am)

III. <u>Կենտրոնի տեխնիկական հագեցվածությունը</u>

2023թ.-ին Կենտրոնը լիովին համալրվեց անհրաժեշտ տեխնոլոգիական լուծումներով և կահույքով: Մասնավորապես՝ գնվել և տեղադրվել է հետևյալը՝

- **Կոնֆերանս համակարգ 2 սենյակների համար**: Լսումների համար նախատեսված 2 սենյակները լիովին համալրվել են ժամանակակից կոնֆերանսային համակարգով, որը թույլ է տալիս իրականացնել լսումների տեսագրություններ և ձայնագրություններ, պրեզենտացիաներ, կազմակերպել լսումներ՝ առցանց, տեղում կամ հիբրիդային եղանակներով: Կոնֆերանսային համակարգն ունի պաշտպանվածության բարձր աստիճան՝ սահմանափակելով որևէ տեսաձայնագրության կորուստ, վնասում կամ արտահոսք համակարգից՝ առանց լիազորված անձանց կողմից երկքայլ վավերացման: Կոնֆերանս սենյակներից յուրաքանչյուրը հագեցած է հոսանքի անխափան սնուցման հզոր սարքերով՝ Multivision, ձայնային համակարգով և կոնֆերանսային համակարգի հիմնական բաղադրիչներով:
  ԱՀՀԿ-ի ընդարձակ սենյակում առկա են կոնֆերանս համակարգի 12 միավոր՝ (1-ը՝ նախագահողի համար) միկրոֆոններով, 3 ինքնաուղղորդվող տեսախցիկներով, 2 մեծ էկրանով և 4 բարձրախոսով: Փոքր սենյակում առկա են կոնֆերանս համակարգի 8 միավոր՝ (մեկը՝ նախագահողի համար) միկրոֆոններով, 3 ինքնաուղղորդվող տեսախցիկներով, 1 մեծ էկրանով և 2 բարձրախոսով:
- **Համակարգիչներ և ներքին սերվերային ցանց**. ԱՀՀԿ-ն գնել է վերջին սերնդի համակարգիչներ՝ հիմնական անհրաժեշտ համակարգչային ծրագրերով, որոնք միացված են ներքին սերվերային ցանցին: Սերվերային համակարգն ապահովում է ներքին ցանցում շրջանառվող բոլոր փաստաթղթերի անվտանգության բարձր մակարդակ և գաղտնիություն: Ցանցի կենսական նշանակությունը ընդգծվում է 2 փաստով. 1. անգամ ֆիզիկական վնասի դեպքում որևէ համակարգչում տվյալներ չեն կորչում. 2. տվյալների և փաստաթղթերի հոսքը մշտապես հսկվում է: Վերոնշյալ փաստերը հատկապես կարևոր են գաղտնիության և տեղեկատվության զգայունության տեսանկյունից, քանի որ արբիտրաժի և հաշտարարության էական կողմերից մեկն այն է, որ տեղեկատվությունը խիստ գաղտնի է, և շատ կարևոր է ապահովել Կենտրոնի տիրապետության տակ գտնվող ցանկացած տեղեկատվության անվտանգությունը: Հակառակ դեպքում ԱՀՀԿ-ի վստահությունը կարող է լրջորեն վնասվել, ինչը կկանխի ԱՀՀԿ-ի զարգացումը

որպես ՎԱԼ հաստատություն: Ընդհանուր առմամբ, Կենտրոնը ձեռք է բերել 13 համակարգիչ, 1 նոութբուք, 5 տպող սարք, 4 վիրտուալ սերվեր, 1 firewall, 2 switch, 1 պրոյեկտոր:

- **Կահույք**. ԱՀՀԿ-ն սկսել է իր գործունեությունն առանց իր գրասենյակում ունենալու համապատասխան կահույք, ուստի, բնականաբար, առաջին քայլերից մեկը կահույքի դիզայնավորումն ու պատվիրումն էր, որը յուրահատուկ տեսք և մթնոլորտ է հաղորդում Կենտրոնին: Կահույքը մշակված է ժամանակակից և դասական ոճերի համադրությամբ:

IV. <u>Ուսուցողական գրականության ձեռքբերում</u>

ԱՀՀԿ-ն 2023 թվականին ձեռք է բերել 2 տասնյակ ուսումնական և մասնագիտական գրքեր: Այդ գրքերն այս փուլում շատ կարևոր են, քանի որ օգնում են ԱՀՀԿ անձնակազմին իրենց մասնագիտական հետազոտությունների և զարգացման գործում: Գրքերն ընտրվել են՝ ելնելով դրանց արդիականությունից, հանրաճանաչությունից և բովանդակությունից: Ավելորդ է ասել, որ ձեռք բերված բոլոր գրքերը ժամանակակից են և արտացոլում են ՎԱԼ ոլորտի վերջին զարգացումները: Ձեռք են բերվել հետևյալ գրքերը՝

- 2 օրինակ՝ Katia Fach Gomez, Ana M. Lopez-Rodriguez, “60 Years of the New York Convention: Key Issues and Future Challenges", the Netherlands: Wolters Kluwer, 2019.
- 2 օրինակ՝ Gary B. Born, “International Arbitration: Law and Practice (Third Edition)”, the Netherlands: Wolters Kluwer, 2021.
- 2 օրինակ՝ Gary B. Born, "International Commercial Arbitration Vol. 1 (Third Edition)”, the Netherlands: Wolters Kluwer, 2021.
- 2 օրինակ՝ Gary B. Born, “International Commercial Arbitration Vol. 2 (Third Edition)”, the Netherlands: Wolters Kluwer, 2021.
- 2 օրինակ՝ Gary B. Born, “International Commercial Arbitration Vol. 3 (Third Edition)”, the Netherlands: Wolters Kluwer, 2021.
- 2 օրինակ՝ Julian D. M. Lew, Loukas A. Mistelis, Stefan Michael Kröll, Stefan Kröll “Comparative International Commercial Arbitration”, The Hague: Kluwer Law International, 2003.
- 2 օրինակ՝ Nigel Blackaby KC, Constantine Partasides KC, Alan Redfern, “Redfern and Hunter on International Arbitration”, Oxford: Oxford University Press, 2022.

- 2 օրինակ՝ Nigel Blackaby KC, Constantine Partasides QC, Alan Redfern and Martin Hunter, “Redfern and Hunter on International Arbitration, Student Edition”, Oxford: Oxford University Press, 2015.
- 2 օրինակ՝ “International Arbitration and Technology”, ed. by Pietro Ortolani, Andre Janssen, Pieter Wolters the Netherlands: Wolters Kluwer, 2022.
- 2 օրինակ of George A. Bermann, “Twilight Issues in International Arbitration: Latent Choice of Law Challenges”, the Netherlands: Wolters Kluwer, 2023.
- 1 օրինակ՝ Fabian Van de Ven, “Insolvency in Commercial Arbitration”, the Netherlands: Wolters Kluwer, 2023.
- 1 օրինակ՝ “Stockholm Arbitration Yearbook 2022”, ed. by Axel Calissendorff, Patrik Schhöldström. The Netherlands: Wolters Kluwer, 2022.

V. Պաշտոնական կայքի բովանդակության մշակում և նախնական կառուցվածքի բարելավում

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի (ԱՀՀԿ) կայքի ստեղծումը նշանակալից դեր ունի Կենտրոնի գործունեության մատչելիության և տեսանելիության բարձրացման գործում: Ասիական բանկի ֆինանսական աջակցությամբ մշակված կայքը տեղեկատվական և այլ մասնագիտական գործառույթներ պարունակող բազմաֆունկցիոնալ մի հարթակ է՝ անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով (վերջինս մշակման փուլում է):

8 հիմնական բաժիններից բաղկացած կայքը ներկայացնում է ԱՀՀԿ գործունեության հիմնական շրջանակը: Ընդհանուր ակնարկի բաժինը (Գլխավոր էջ) ծառայում է որպես հարթակ՝ Կենտրոնի գործունեության, մատուցած ծառայությունների, անձնակազմի, Հոգաբարձուների խորհրդի և Արբիտրաժային խորհրդի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ստանալու համար:

Նորությունների և թարմացումների մասին բաժինը տեղեկատվական հարթակ է, որտեղ տեղադրվում են կարևոր նորություններ ԱՀՀԿ-ի ընթացիկ գործունեության և արբիտրաժի ու հաշտարարության համաշխարհային հարթակներում տեղի ունեցող տեղաշարժերի մասին: Սինխրոն թարմացման հատկության շնորհիվ կայքից օգտվողները մշտապես կարող են տեղեկացված լինել արբիտրաժի և հաշտարարության աշխարհի վերջին զարգացումներից:

«Ծառայությունների» բաժնի ներքո կայքի կարևոր բաղադրիչներից մեկն «Արբիտրաժ» բաժինն է, որն առաջարկում է հարուստ ռեսուրսներ, ձևանմուշներ և տեղեկատվություն արբիտրաժի մասին՝ մատուցելով արբիտրաժի բնույթն ու ընթացակարգերը մատչելի եղանակներով: Այս բաժնում հատկանշական է ընդգծել, «Արբիտրաժային վճարներ» հաշվիչի ընդգրկումը, որն օգտատերերի համար գործնական հարթակ է՝ իրենց ծախսերը գնահատելու համար՝ իհարկե ելնելով իրենց կոնկրետ գործի առանձնահատկություններից: Կայքը նաև հնարավորություն է տալիս առցանց ներկայացնել գործը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ ստանալով անհատական հղման համարանիշ, որն օգտագործվում է հետագա հաղորդակցության համար:



Նկար 3. AMCA-ի կայքի առաջին էջը

«Արբիտրաժ» բաժնում[4] հասանելի է արբիտրների համապարփակ ցանկը: Այս հատվածում առկա են զտման ֆունկցիաներ, որոնք կայքի այցելուներին հնարավորություն են տալիս կատարել արբիտրի ընտրություն՝ հիմնվելով հատուկ չափանիշների վրա: ԱՀՀԿ-ն մշակել է արբիտրի կենսագրության ձևանմուշ, որն օգտատերերին հնարավորություն է տալիս տեղեկատվություն ստանալ նրանց կրթության, մասնագիտական փորձի, ազգության, ներկայիս զբաղվածության, լեզուների իմացության և նրանց մասնագիտացման մասին: Այս գործիքի միջոցով ապահովվում է անհատականացված և արդյունավետ մոտեցում Կենտրոն դիմողին,

[4] ԱՀՀԿ-ի կողմից առաջարկվող արբիտրների ցանկն է: Այն առաջարկում է մասնագետների բազմազան և հմուտ խումբ՝ ազատություն տալով ընտրել արբիտր, որը կատարելապես համապատասխանում է կողմերի պահանջներին:

ինչն էլ նպաստում է յուրաքանչյուր գործի եզակի պահանջների լավագույնս համապատասխանող արբիտրի ընտրությանը:

Խորհրդատվական ծառայությունների գործիքն օգտատերերին տրամադրում է ինտերակտիվ տարածք՝ պլանավորելու խորհրդակցության նախընտրելի օրը և ժամը: Այս գործիքը հնարավորություն է տալիս անհատներին ընտրել իրենց հարմար որոշակի ժամանակային հատված՝ խորհրդատվություն կազմակերպելու համար: Այսպես օգտատերերը կարող են արդյունավետ կերպով պլանավորել և համակարգել խորհրդատվությունները:

«Գործունեություն» բաժնում տեղեկատվություն է տրվում ԱՀՀԿ-ի կողմից նախաձեռնված կարևոր կրթական և միջազգային ծրագրերի մասին: Այս բաժինը պարբերաբար թարմացվում է՝ օգտվողներին վերջին ծրագրերի և նախաձեռնությունների մասին իրազեկելու նպատակով:

«Ռեսուրսներ» բաժինը արբիտրաժի և հաշտարարության շուրջ կարևոր նյութերի մի հավաքածու է: Այս բաժինը ներառում է ներպետական իրավական նորմերը, միջազգային համաձայնագրերը և փաստաթղթերը՝ մի կողմից օգտատերերին տրամադրելով Հայաստանի իրավական դաշտի մասին համապարփակ պատկերացում, մյուս կողմից՝ ներկայացնելով միջազգային փորձը արբիտրաժի և հաշտարարության պրակտիկայի մասին: Բաժինը պարունակում է նաև ռազմավարական նշանակության նախադեպային իրավունքի ուսումնասիրություններ՝ առաջարկելով գործնական պատկերացումներ իրական աշխարհում առկա արբիտրաժային և հաշտարարության գործերի սցենարների և դրանց լուծումների վերաբերյալ: Ավելին, այն պարունակում է ոլորտի նշանակալի գրականություն՝ օգտատերերին տրամադրելով ակադեմիական ուսումնասիրություններ և գիտական աշխատանքներ: Վերջապես, ԱՀՀԿ-ի կողմից հրապարակումների ընդգրկումն ավելի է հարստացնում այս ռեսուրսների շտեմարանը՝ դառնալով արժեքավոր տեղեկատու այն մարդկանց համար, ովքեր ձգտում են ավելի խորը և մանրամասն հասկանալ արբիտրաժի և հաշտարարության բարդությունները:

ԱՀՀԿ կայքը, օգտատիրոջ համար հարմար արտատեքսով և դինամիկ գործառույթներով, անկյունաքարային դեր ունի Կենտրոնի առաքելությունն առաջ մղելու գործում:

VI. ԱՀՀԿ Հոգաբարձուների խորհրդի ձևավորում և գործունեությունը

ԱՀՀԿ կանոնադրության համաձայն՝ 2023 թվականի օգոստոսի 10-ին ստեղծվել է Հոգաբարձուների խորհուրդ: Ոլորտում փորձառու և անվանի կազմակերպություններ ներկայացնող անձանցից կազմված ԱՀՀԿ խորհուրդն ունի բազմազան և ազդեցիկ կազմ:

ԱՀՀԿ հիմնադիրները որոշել են Խորհուրդը ձևավորել ներքոնշյալ կազմով, համաձայն ԱՀՀԿ կանոնադրության 27-րդ հոդվածի, ըստ որի՝ Հոգաբարձուների խորհուրդը պետք է կազմված լինի յուրաքանչյուր կազմակերպության կողմից ներկայացված մեկ անդամից: Խորհրդի կազմը հետևյալն է՝



Նկար 4. AMCA-ի Հոգաբարձուների խորհրդի կազմը

- «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամ՝ Տիգրան Դադունց,
- Հայ իրավաբանական միություն՝ Լևոն Գոլենդուչին,
- «Հայկական բարեգործական ընդհանուր միություն» (ՀԲԸՄ)՝ Հարութ Ջեք Սամրա,
- ՀՀ կենտրոնական բանկ՝ Արման Ալոյան,
- «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ՝ Լենա Մինասյան,
- «Հայ ծրագրավորողների ասոցիացիա» ՀԿ՝ Գուրգեն Գրիգորյան,
- «Առաջադեմ տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ՝ Արկադի Սահակյան,
- «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ՝ Քրիստինե Գյոնջյան,
- «Հայաստանի Հանրապետության փաստաբանների ակադեմիա» հիմնադրամ՝ Վանիկ Մարգարյան,

Հոգաբարձուների խորհուրդը ԱՀՀԿ ղեկավար մարմինն է, որը կազմված է երեք տարի ժամկետով նշանակված 9 անդամից: Հոգաբարձուների խորհուրդն ունի պարտականությունների լայն շրջանակ, ներառյալ Կենտրոնի ռազմավարական պլան(ներ)ի և ձեռնարկատիրական գործունեության տեսակների հաստատումը: Այն իրավասու է հաստատել Կենտրոնի բյուջեն, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և գործունեության տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև Կենտրոնի գույքի տնօրինման կարգը: Բացի այդ, Խորհուրդը որոշում է կայացնում իր անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին և որոշումներ ընդունում առանցքային դերերի ընտրության վերաբերյալ, ինչպիսիք են Արբիտրաժային խորհրդի նախագահը, տնօրենը և անդամները: Ավելին, Խորհուրդը որոշում է Արբիտրաժային խորհրդի չափը և կազմը, հաստատում է կանոնադրության փոփոխությունները և վերահսկողություն է իրականացնում Կենտրոնի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ: Այն տարեկան վերանայում է տնօրենի հաշվետվությունները, վերահսկում է իր որոշումների կատարումը, ընտրում է Կենտրոնի աուդիտորին, հաստատում է նրա կառուցվածքը և հաստիքացուցակը: Ավելին, Խորհուրդն իրավասու է հաստատել արբիտրաժի և հաշտարարության կանոնները, ներառյալ փոփոխություններն ու լրացումները, և իրականացնում է օրենքով, կանոնադրությամբ և Կենտրոնի այլ մարմիններին չպատվիրակված այլ լիազորություններ:
Հոգաբարձուների խորհրդի անդամների բազմազան փորձն ու առնչությունը ապահովում են որոշումների կայացման համապարփակ և ընդգրկուն մոտեցում՝ խթանելով դինամիկ միջավայր Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի արդյունավետ կառավարման համար:

Հաշվետու ժամանակահատվածում Հոգաբարձուների խորհուրդն անցկացրել է 5 առցանց նիստ և ընդունել 15 որոշում՝

- 2023 թվականի օգոստոսի 18-ի «Հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրելու մասին» № 1 որոշումը:
- 2023 թվականի օգոստոսի 18-ի «Հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրելու մասին» № 2 որոշումը:
- 2023 թվականի օգոստոսի 18-ի «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին № 3 որոշումը:

- 2023 թվականի օգոստոսի 18-ի «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի վկայականների ցանկը և պաշտոնական միջոցառումները հաստատելու մասին № 4 որոշումը:
- 2023 թվականի օգոստոսի 18-ի «Կենտրոնի տնօրենին այլ կազմակերպություններում վճարովի պաշտոններ զբաղեցնելու համաձայնություն տալու մասին» № 5 որոշումը.
- 2023 թվականի սեպտեմբերի 19-ի «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի արբիտրաժային խորհրդի քանակական կազմը որոշելու և արբիտրաժային խորհրդի առաջին կազմը ձևավորելու մասին № 6 որոշումը:
- 2023 թվականի սեպտեմբերի 19-ի «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի արբիտրաժային խորհրդի նախագահի ընտրության մասին № 7 որոշումը:
- 2023 թվականի սեպտեմբերի 19-ի «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի արբիտրաժային խորհրդի նախագահի տեղակալ ընտրելու մասին № 8 որոշումը:
- 2023 թվականի նոյեմբերի 27-ի «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի արբիտրաժային կանոնները հաստատելու մասին № 9 որոշումը:
- 2023 թվականի դեկտեմբերի 1-ի «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները սահմանելու մասին № 10 որոշումը:
- 2023 թվականի դեկտեմբերի 1-ի «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի գույքի տնօրինման կարգը հաստատելու մասին № 11 որոշումը:
- 2023 թվականի դեկտեմբերի 1-ի «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի հաշվարկման և փոխհատուցման կարգը հաստատելու մասին № 12 որոշումը:
- 2023 թվականի դեկտեմբերի 1-ի «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի 2023 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին № 13 որոշումը:

- 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի հաստիքացուցակը հաստատելու մասին № 14 որոշումը:
- 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին № 15 որոշումը:

VII. <u>ԱՀՀԿ Արբիտրաժային խորհրդի ձևավորումը</u>

ԱՀՀԿ հոգաբարձուների խորհուրդը 2023 թվականի սեպտեմբերի 19-ին ընդունել է Արբիտրաժային խորհուրդ ձևավորելու մասին թիվ 6 որոշումը: Խորհուրդը, որը կազմված է արբիտրաժային ոլորտում հարգված միջազգային և տեղական մասնագետներից, հանդիսանում է բազմակողմանի զարգացած և փորձառու մարմին: Արբիտրաժային խորհուրդը, արբիտրաժային գործընթացների մասով, ԱՀՀԿ կենտրոնական մարմինն է: Համաձայն Կանոնադրության՝ Արբիտրաժային խորհրդին է վերապահված մի քանի հիմնական պարտականություններ, ներառյալ արբիտրների և քարտուղարության գործառույթներ իրականացնող անձանց վարքագծի կանոնների սահմանումը: Այն պատասխանատու է արբիտրաժային խորհուրդը կարգավորող ընթացակարգային կանոնների ընդունման համար: Խորհուրդն իրավասու է հաստատել առաջադրված արբիտրներին, նշանակել արբիտրներ Արբիտրաժային կանոններով սահմանված դեպքերում, որոշել արբիտրների թիվը, որոշում կայացնել արբիտրների բացարկի մասին գրավոր հայտարարությունների վերաբերյալ, փոխարինել արբիտրներին, համախմբել արբիտրաժները, որոշել արբիտրաժային համաձայնագրերի prima facie գոյությունը մինչև արբիտրաժային տրիբունալի կազմավորումը, որոշում կայացնել Արբիտրաժային կանոններով սահմանված և (կամ) կողմերի կողմից վերջնական վճիռը կայացնելու համար փոփոխված ժամկետների երկարաձգման մասին, ամրագրել արբիտրների վճարները Արբիտրաժային կանոններով սահմանվածից ավելի կամ ցածր ցուցանիշով և այլն: Միջազգային և տեղական արբիտրաժային պրակտիկաներում խորը փորձ ունեցող անձանց ընդգրկումը բարձրացնում է Խորհրդի դերը՝ ավելի լայն մասշատբների վեճերի լուծման համար:

Այսպիսով, Հիմնադրամի արբիտրաժային խորհուրդը բաղկացած է 10 հեղինակավոր անդամներից, մասնավորապես.

- Արտյոմ Գեղամյան - TABIA Legal Solutions-ի կառավարիչ գործընկեր,
- Արա Խզմալյան - ADWISE Business and Legal Consulting-ի գործընկեր,
- Թոմաս Սնայդեր - Միջազգային արբիտրաժի գործընկեր և ղեկավար, Charles Russell Speechlys LLP,
- Հայկ Կուպելյանց - որակավորված փաստաբան Անգլիայում և Ուելսում,
- Անդրեա Կարլեվարիս - AIA-ի նախագահ, BonelliErede-ի գործընկեր,
- Հայկ Հովհաննիսյան - ՀԱՊ իրավաբանական ընկերության կառավարիչ գործընկեր,
- Աիդա Ավանեսյան - Հայաստանի արբիտրների ասոցիացիայի անդամ, դասախոս,
- Գալինա Զուկովա - ZUKOVA Legal-ի գործընկեր,



Նկար 5. AMCA-ի Արբիտրաժային խորհրդի կազմը

- Ռաֆիկ Գրիգորյան - Խորհրդի նախագահի տեղակալ և «Սիգմա» իրավաբանական խմբի կառավարիչ գործընկեր,
- Գրանտ Հանեսյան - Խորհրդի նախագահ և անկախ արբիտր Նյու Յորքում,

VIII. <u>Արբիտրաժային խորհրդի ազգային կոմիտեի առաջին նիստի կազմակերպում</u>

Դեկտեմբերի 11-ին տեղի ունեցավ Արբիտրաժային խորհրդի ազգային կոմիտեի առաջին նիստը: Օրակարգի առաջին հարցն էր Ազգային կոմիտեի պաշտոնական կազմը: Խորհրդի անդամները քննարկել են նաև ԱՀՀԿ-ի գալիք տարվա ռազմավարությունը՝ կիսվելով իրենց կարծիքներով և խորհուրդներով: Արբիտրաժային խորհրդի նախագիծը վերջնական տեսքի բերելու նպատակով, Նախագահի առաջարկությունների հետ միասին, քննարկվել են հետևյալ հարցերը՝

ա) ներպետական և միջազգային գործերի տարբերակումը. ե՞րբ և ինչպե՞ս պետք է տարբերակել: Ազգային կոմիտեի դերը, բ) Ե՞րբ և ո՞ր չափանիշների հիման վրա

Գլխավոր քարտուղարը պետք է արբիտրաժային տրիբունալի իրավասության հարցը փոխանցի Արբիտրաժային խորհրդին, եթե տրիբունալն արդեն ձևավորված է: գ) Արբիտրաժային խորհրդի կողմից առաջադրված արբիտրներին չհաստատելու կամ չնշանակելու հիմքերը և դ) Արդյո՞ք խորհուրդը պարտավոր է ներկայացնել prima facie իրավասության, համախմբման, արբիտրի բացարկի, հաստատման փոխարինման կամ մերժման պատճառները:

Խորհրդի անդամները համաձայնել են առաջարկություններին և խնդրել դրանք ներառել Արբիտրաժային խորհրդի կանոնակարգի նախագծում: Ինչպես պահանջում է ԱՀՀԿ կանոնադրությունը, նիստից հետո ընդունվել է Արբիտրաժային խորհրդի նախագահի որոշումը Ազգային կոմիտե ստեղծելու մասին:

IX. Արբիտրաժի և հաշտարարության վարույթների և ԱՀՀԿ ներքին փաստաթղթերի մշակում

1. Արբիտրաժի և հաշտարարության վարույթներին առնչվող փաստաթղթերի մշակում

Արբիտրաժի և հաշտարարության արդյունավետ և արագ անցկացման ապահովումը պահանջում է ոչ միայն Արբիտրաժի և հաշտարարության կանոնների, այլ նաև ողջ գործընթացի համար անհրաժեշտ այլ հիմնական փաստաթղթեր և ձևերի ընդունում: Այսպիսով, կազմվել են հետևյալ փաստաթղթերը՝

1) Արբիտրաժային խորհրդի կանոնակարգ,
2) Արբիտրների վարքագծի կանոններ,
3) Քարտուղարության գործառույթներ իրականացնող անձանց վարքագծի կանոններ,
4) Արբիտրաժային գործերի կառավարման ընթացակարգը Քարտուղարության համար,
5) Օրինակելի արբիտրաժային դրույթներ,
6) Օրինակելի արբիտրաժի հայտ,
7) Օրինակելի ներկայացման պայմանագիր,
8) Օրինակելի լիազորագիր,
9) Արբիտրի ընդունման, հասանելիության, անաչառության և անկախության օրինակելի հայտարարություն,
10) Օրինակելի արբիտրաժային վճիռ,
11) Օրինակելի հաշտարարության համաձայնագիր,

12) Օրինակելի հաշտարարության պայմանագիր:

2. ԱՀՀԿ ներքին փաստաթղթերի մշակում

Հիմնվելով իր կանոնադրության վրա և հաշվի առնելով Կենտրոնի կողմից կառավարվող տարբեր գործընթացների վերաբերյալ մանրամասն կանոնակարգեր ունենալու անհրաժեշտությունը, ԱՀՀԿ-ն մշակել է հետևյալ փաստաթղթերը.

1) Հոգաբարձուների խորհրդի ««Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները սահմանելու մասին» որոշումը (ընդունվել է Խորհրդի կողմից):
2) Հոգաբարձուների խորհրդի ««Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի գույքի տնօրինման կարգը հաստատելու մասին» որոշումը (ընդունվել է Խորհրդի կողմից):
3) Հոգաբարձուների խորհրդի ««Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի հաշվարկման և հատուցման կարգը հաստատելու մասին» որոշումը (ընդունվել է Խորհրդի կողմից).
4) ԱՀՀԿ կայքի բովանդակությունը:
5) ԱՀՀԿ կայքի գաղտնիության քաղաքականությունը:

X. ԱՀՀԿ-ի արբիտրաժի կանոնների մշակում և ընդունում

Արբիտրաժի կանոնները մշակման և վավերացման երկար գործընթաց են անցել: ԱՀՀԿ Արբիտրաժային խորհուրդը կարևոր դեր է խաղացել՝ անգնահատելի ներդրում ունենալով Կանոնների համապարփակ վերանայման գործում: Արդյունքում Կանոնները պատշաճ կերպով հաստատվել են Հոգաբարձուների խորհրդի կողմից 2023 թվականի նոյեմբերի 27-ին:[5]

Արբիտրաժի կանոնները ստեղծվել են, որպեսզի կողմերին տրամադրեն վեճերի լուծման հստակ, հակիրճ և արդյունավետ մեխանիզմ ինչպես ներքին, այնպես էլ միջազգային վեճերի համար: Մասնավորապես, արբիտրաժի կանոններն ապահովում

[5] ARBITRATION - AMC (amca.am)

են կողմերի ինքնավարության սկզբունքի իրականացումը, նախատեսում են ճկունություն և արագացված ընթացակարգեր, արդյունավետ հաղորդակցություն և փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացման առաջնահերթություն, ինչպես նաև արտակարգ արբիտրաժի միջոցով ժամանակավոր և հրատապ միջոցառումներ կիրառելու հնարավորություն:

Նկար 6. AMCA-ի Արբիտաժային կանոնների կազմը

Կարևոր է նշել, որ Արբիտրաժային խորհրդի անդամները, արբիտրաժային ոլորտի միջազգային և ազգային իրավաբան փորձագետները մեծահոգաբար իրենց մասնագիտական ներդրումն են ունեցել Արբիտրաժի կանոնների մշակման և ընդունման գործընթացում:

Աշխարհի առաջատար արբիտրաժային հաստատությունների կողմից որդեգրված մոտեցմանը համահունչ՝ Արբիտրաժի կանոնները ապահովում են կառուցվածքային, ինստիտուցիոնալ շրջանակ՝ գործընթացում թափանցիկություն, արդյունավետություն և արդարություն ապահովելու համար: Արբիտրաժի կանոնների համաձայն՝ արբիտրաժը հանգեցնում է չեզոք արբիտրաժային տրիբունալի պարտադիր որոշման, որը ենթակա է կատարման ինչպես ներքին, այնպես էլ միջազգային մակարդակով: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը հիմնված է Միջազգային առևտրային արբիտրաժի մասին UNCITRAL օրինակելի օրենքի վրա, ինչը Հայաստանը դարձնում է արբիտրաժի համար բարենպաստ վայր:

XI. <u>ԱՀՀԿ-ի հաշտարարության կանոնների մշակում</u>

Հայաստանում հաշտարարության ինստիտուտի ստեղծման և խթանման ուղղությամբ իրականացվող բարեփոխումներին համահունչ՝ ԱՀՀԿ-ն, որպես առաջամարտիկ, նախաձեռնել է հաշտարարության կանոնների մշակման աշխատանքները՝ պայմանավորված ավանդական դատական գործընթացից դուրս վեճերի լուծման համար կառուցվածքային շրջանակ տրամադրելու անհրաժեշտությամբ: Գիտակցելով հաշտարարության կարևորությունը, որպես վեճերի այլընտրանքային լուծման արդյունավետ և ծախսախնայող միջոց՝ Կենտրոնը սկսել է մշակել հաշտարարության համապարփակ կանոններ:

Նախապատրաստական փուլը ներառում էր մանրակրկիտ հետազոտություն, խորհրդակցություններ և համագործակցություն շահագրգիռ կողմերի միջև: Ձևավորվել է հատուկ աշխատանքային խումբ, որը բաղկացած էր Կենտրոնի աշխատակիցներից, իրավական փորձագետներից, պրակտիկ մասնագետներից և տարբեր ոլորտների ներկայացուցիչներից: Թիմը մանրակրկիտ վերլուծություն է իրականացրել գլոբալ մասշտաբով գործող հաշտարարության կանոնների վերաբերյալ՝ բացահայտելով լավագույն փորձը և հարմարեցնելով դրանք Կենտրոնի հատուկ կարիքներին և համատեքստին:

ԱՀՀԿ-ն իրականացրել է այնպիսի միջազգային առաջատար կառույցներում գործող հաշտարարության կանոնների մանրամասն ուսումնասիրություն, ինչպիսիք են ICC, ICSID, UNCITRAL, CEDR և այլն՝ նպատակ ունենալով Կանոններում ներառել փորձով ապացուցված տարրեր՝ իհարկե դրանք հարմարեցնելով տեղական պահանջներին: Դրան զուգահեռ, Կենտրոնը համագործակցել է իրավաբանների, ոլորտի փորձագետների և հաշտարարության ծառայությունների պոտենցիալ օգտատերերի հետ՝ լսելու նրանց պատկերացումները և ապահովելու, որ կանոններն արտացոլեն բազմակողմանի տեսակետներ: Համեմատական հետազոտությունների և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների հիման վրա մշակվել են Կենտրոնի հաշտարարության կանոնները՝ ապահովելով հստակություն, ճկունություն և արդարություն:

Հաջորդ փուլը Հոգաբարձուների խորհրդից հաստատում ստանալն էր: Այս փուլը ներառում էր շահագրգիռ կողմերի հետ հետագա խորհրդակցություն, տեղեկատվության տարածում և խորհրդի անդամներից աջակցության ստացում: Այս համատեքստում հանդիպումներ են կազմակերպվել՝ տեղեկատվություն հավաքելու և առկա մտահոգություններին անդրադառնալու համար:

Փաստաթուղթը վերջնական տեսքի բերելուց հետո Կենտրոնի հաշտարարության կանոնները թարգմանվել են նաև անգլերեն և պատրաստվել են ներկայացվելու Հոգաբարձուների խորհրդի վերանայմանը: Այս կանոնների մշակումն ու ընդունումը նշանակալից հանգույց է վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների խթանման և Հայաստանում հաշտարարության համար բարենպաստ միջավայր ստեղծելու գործում:

XII. ԱՀՀԿ գրքույկի մշակում, թարգմանություն անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն և հրատարակում[6]

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի առաքելության իրականացման և արբիտրաժի ու հաշտարարության մասին էական գիտելիքների տարածման շարունակական ջանքերի շրջանակներում՝ մշակվել և հրատարակվել է համապարփակ տեղեկատվական գրքույկ: Կենտրոնի կողմից ձեռնարկված այս նախաձեռնությունը նպատակ ունի հանրության համար առավել հասանելի դարձնել ԱՀՀԿ-ի նպատակները, գործառնական անկախությունն ու արբիտրաժի ու հաշտարարության օգտավետությունը:



Նկար 7. AMCA-ի տեղեկատվական գրքույկի կազմը

Տեղեկատվական գրքույկն ներառում է ներքոնշյալը և ոչ միայն.

- Ծանոթություն ԱՀՀԿ-ի հետ, ներառյալ տեղեկություններ ֆինանսական աղբյուրների և և Կենտրոնի անկախ գործելաոճի մասին:
- ԱՀՀԿ-ի կողմից առաջարկվող ծառայությունների համառոտ նկարագրությունները:
- Իրավական վեճերի ոլորտների դասակարգված ցանկը, որոնք կարող են քննվել ԱՀՀԿ-ում:
- Տեղեկատվություն արբիտրաժ հասկացության, արբիտրաժի միջոցով վեճերի լուծման պայմանների և պոտենցիալ արբիտրների որակավորման մասին:
- Արբիտրաժի հետ կապված հիմնական առավելությունների կարևորագույն կետերը:
- ԱՀՀԿ-ում գործերի վարումը կարգավորող ընթացակարգերը:
- Ուղեցույց հայց ներկայացնելու վերաբերյալ և Կենտրոնում հրատապ միջոցներ կիրառելու հնարավորությունը:
- Հաշտարարության բնույթի և իրականացման վերաբերյալ տեղեկատվություն, որում անդրադարձ է կատարվում տարբեր մասնավոր հարցերի:

Ինչպես բիզնես ոլորտի ներկայացուցիչների, այնպես էլ լայն հանրության համար նախատեսված գրքույկը՝ նպատակ ունի բարձրացնել հանրության իրազեկությունը

[6] Blue Gray Modern Business Flyer (amca.am)

արբիտրաժի և հաշտարարության մասին՝ ներկայացնելով վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմները տեղեկատվական բովանդակության միջոցով:

Հաշվի առնելով Կենտրոնի՝ որպես միջազգային Կենտրոն հաստատվելու ձգտումը, տեղեկատվական գրքույկը թարգմանվել և հրատարակվել է անգլերեն (500 օրինակ), ֆրանսերեն (50 օրինակ) և ռուսերեն (50 օրինակ): Այս բազմալեզու մոտեցումն ապահովում է տեղեկատվության լայն տարածում, լեզվական արգելքների հաղթահարում և համահունչ է մեր միջազգային նկրտումներին:

XIII. <u>Օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություն</u>

Հաշվի առնելով այն փաստը, որ արբիտրաժային օրենսդրությունը երկրի և ԱՀՀԿ-ի հաջողության գրավականն է արբիտրաժում, Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը ձեռնարկել է ակտիվ միջոցներ՝ առկա իրավական բացերի վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու, խնդիրները բացահայտելու և լուծելու համար՝ գործընթացում ներգրավելով դատավորներ, փաստաբաններ և այլ իրավաբաններ: Մասնավորապես, իրավական բացերը և առկա խնդիրները դատավորների կողմից մատնանշվել են Արդարադատության ակադեմիայում անցկացվող թրեյնինգի և ԱՀՀԿ-ի կողմից կազմակերպված դասընթացների, ինչպես նաև փաստաբանների և այլ իրավաբանների կողմից՝ ԱՀՀԿ-ի կազմակերպած սեմինարների, դասընթացների և մասնավոր հանդիպումների ժամանակ:

Նկար 8. Կլոր սեղան-քննարկում օրենսդրական բացերի շուրջ

Արդյունքում, ԱՀՀԿ-ն նախաձեռնել է օրենսդրական բոլոր բացերն ու խնդիրներն ուսումնասիրելու գործընթաց, որոնք մատնանշվել են ինչպես մասնագետների, այնպես էլ ԱՀՀԿ անձնակազմի կողմից հավաքված խնդիրների ուսումնասիրման ընթացքում: Այս փորձաքննությունն իրականացվել է լայնածավալ հետազոտության և համեմատական վերլուծության միջոցով: Միջազգային լավագույն փորձը վերլուծվել է իրավարարության, էլեկտրոնային գրավոր հաղորդակցության և հեռավար լսումների անցկացման, արտակարգ իրավիճակներում արբիտրաժի,

լրացուցիչ կողմերի միանալու, վաղեմության ժամկետի, դատական օգնության, արբիտրաժային վճիռների կատարման և այլ հարցերի վերաբերյալ:

Իրավական հետազոտությունների հիման վրա մշակվել է օրենսդրական փոփոխությունների առաջարկ, որն անդրադառնում է օրենսդրության բացերին և առաջարկում է ավելի շատ արբիտրաժային կարգավորումներ: Առաջարկի շուրջ մանրամասները քննարկվել են գործընկերների հետ դեկտեմբերի 25-ին՝ կլոր սեղանի շրջանակներում:[7] Կլոր սեղանին մասնակցում էին արբիտրաժային ոլորտի փորձագետներ, այդ թվում՝ Հայաստանի մշտական արբիտրաժային հաստատությունների ներկայացուցիչներ, արբիտրներ, դատավորներ, իրավաբաններ: Միջոցառման շրջանակում բացման խոսքով հանդես եկավ ԱՀՀԿ տնօրեն Տաթևիկ Մատինյանը, ով անդրադարձավ ոլորտի օրենսդրական խնդիրներին՝ կարևորելով դրանց լուծման անհրաժեշտությունը, որպես Հայաստանում վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների մշակման էական նախապայման:

Կենտրոնի փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյանն անդրադարձավ այնպիսի հարցերի, ինչպիսիք են արբիտրաժի կարգով քննվող գործերի շրջանակի վերանայումը, էլեկտրոնային ծանուցումների և հեռավար նիստերի անցկացման հնարավորության նախատեսումը, արբիտրաժային տրիբունալի իրավասության հարցը, օրենսդրական մակարդակում արտակարգ միջոցների կիրառումը, լրացուցիչ կողմի ներգրավումը, վարույթների միացման հնարավորության սահմանումը և այլն:

Հանդիպման մասնակիցները, կարևորելով նախաձեռնությունը, իրենց գոհունակությունն արտահայտեցին ձեռնարկված օրենսդրական փոփոխությունների նախագծի կազմման գործընթացի առթիվ: Նրանք իրենց պատրաստակամությունը հայտնեցին ոլորտային օրենսդրության բարելավման ուղղությամբ ջանքեր գործադրելու հարցում:

Դեկտեմբերի 25-ի հանդիպումից հետո նախաձեռնողական քայլ կատարվեց աշխատանքային խումբ ստեղծելու ուղղությամբ: Աշխատանքային խումբը կքննարկի օրենսդրական գործընթացի բարդությունները՝ ապահովելով, որ առաջարկվող փոփոխությունները համապատասխանեն արբիտրաժային համայնքի շահերին և նպաստեն Հայաստանում առևտրային արբիտրաժի ընդհանուր արդյունավետությանը: Ավելին, խումբն իրավասու է առաջարկություններ անել ԱՀՀԿ-

[7] Round table discussion aimed at highlighting problems and gaps in the legislation - AMC (amca.am):

ի կողմից ներկայացված օրենսդրական առաջարկությունների վերաբերյալ և աջակցել ԱՀՀԿ-ին տարբեր օրենքներում փոփոխությունների վերջնական նախագծեր մշակելու հարցում:

Առաջին աշխատանքային փաստաթղթերը պատրաստել է ԱՀՀԿ-ն և կիսվել խմբի հետ:

XIV. Պրոֆեսիոնալ հարթակի մշակման նախաձեռնություն

Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրին համահունչ՝ ԱՀՀԿ-ն հաջողությամբ մշակել է գործերի թվային կառավարման համակարգի տեխնիկական առաջադրանքը:

Համակարգի առաջնային նպատակները ներառում են տեխնիկական առաջադրանքում նշված գործառույթների կատարումը, Կենտրոնի կողմից ձեռնարկվող արբիտրաժային գործընթացների կառավարումը և բիզնես գործընթացներից բխող փաստաթղթերի շրջանառության կենտրոնացված պահպանման, ավտոմատացման և կառավարման հեշտացումը:

Համակարգի շահառուներն են արբիտրաժի և հաշտարարության կողմերը, ԱՀՀԿ աշխատակազմը, Արբիտրաժային խորհուրդը, արբիտրները, հաշտարարները, ինչպես նաև գործընթացին անմիջականորեն չներգրավված երրորդ կողմերը (օրինակ՝ փորձագետները կամ վկաները): Համակարգի հիմնական նպատակն է ապահովել գործառույթների արագ, արդյունավետ և անխափան կատարումը, որը մանրամասն նկարագրված է տեխնիկական առաջադրանքում: Այն ներառում է ապահով միջավայրում արբիտրաժային դիմումների մշակումը, ներգրավված կողմերի միջև փաստաթղթերի շրջանառությունը, ծանուցումները, լսումները և տարբեր այլ կարևոր գործառույթներ:

Այս գործընթացների պարզեցմամբ՝ ակնկալվում է, որ Համակարգը կբարձրացնի արբիտրաժային վարույթի ընթացքում ծախսերի և ժամանակի կառավարման արդյունավետությունը՝ միաժամանակ ապահովելով ԱՀՀԿ-ի կողմից արբիտրաժային գործընթացի ընթացքում ձեռք բերված տվյալների անվտանգությունը:

Համակարգը բաղկացած կլինի մի քանի ծրագրային մոդուլներից, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է սույն հաշվետվության մեջ նշված հատուկ գործառույթները կատարելու համար: Այս ռազմավարական ձեռքբերումը էապես

կնպաստի ԱՀՀԿ-ի տեխնոլոգիական առաջընթացին և գործառնական արդյունավետությանը:

Մշակման գործընթացը սկսվել է դեկտեմբերի վերջին և սեղմ ժամկետներում արդեն պատրաստ էր համակարգի կառուցվածքը: Մշակումն իրականացնում է «Ավրոմիկ» ՍՊԸ-ն, որը հաղթել է համակարգի մշակման համար հայտարարված մրցույթում: Ընդհանուր կառուցվածքը մշակելուց բացի, ծրագրավորողներին հաջողվել է աշխատել բիզնես ընթացակարգերի մոդելավորման վրա, ստեղծել որոշ հիմնական նախագծերի նմուշներ, ուսումնասիրել համապատասխան օրենսդրական ակտերը և քարտեզագրել անհրաժեշտ ինտեգրումները: Համակարգի MVP-ն (նվազագույն կենսունակ արտադրանք) պատրաստ կլինի հունիսի վերջին: Վերջնական համակարգը պատրաստ կլինի օգտագործման մինչև հուլիսի վերջ:

ԳԼՈՒԽ 2

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

XV. Միջազգային համաժողովի համատեղ հյուրընկալում[8]

2023 թվականի սեպտեմբերի 4-8-ը ԱՀՀԿ-ն համատեղության կարգով հյուրընկալել է «Հայկական արբիտրաժային շաբաթ» միջազգային համաժողովը, որին մասնակցել են ավելի քան 200 հյուրեր աշխարհի 30 երկրներից: «*Բիզնեսի նկատմամբ վստահության բարձրացումը՝ տնտեսության գլոբալացման պայմաններում միջազգային առևտրային արբիտրաժում վեճերի լուծման ժամանակակից մեթոդների միջոցով*» խորագրով միջազգային արբիտրաժային կոնֆերանսը համախմբել էր միջազգային արբիտրաժի ոլորտի ականավոր փորձագետների, մասնագետների և առաջնորդների, ովքեր կիսվեցին միջազգային առևտրային արբիտրաժի լավագույն փորձով և զարգացման վերջին միտումներով: Ձեռնարկատերերը, ներդրողները, արբիտրները, իրավաբան մասնագետները կամ քաղաքացիները, որոնք պարզապես հետաքրքրված են միջազգային արբիտրաժի ոլորտով, հնարավորություն ունեցան խորացնել իրենց գիտելիքները և ընդլայնել ծանոթությունների շրջանակը:

Նկար 9. Կոնֆերանսի բացումը

[8] Արբիտրաժի և հաշտարարության ինստիտուտը ՀՀ-ում ներդնելու հնարավորությունը. 7-օրյա կոնֆերանս (youtube.com)

Համաժողովի բացմանը[9] ելույթով հանդես եկան ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանը[10], արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը[11], ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը, ԱՀԲ-ի հայաստանյան մշտական առաքելության տնօրեն Դոն Լամբերտը, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության համագործակցության ղեկավար Ֆրենկ Հեսը և ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի քարտուղար Աննա Ժուբին-Բրեթը: Փոխվարչապետ Միեր Գրիգորյանը նշեց, որ ՀՀ կառավարության համար նշանակալի են վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների մշակումը, դրանց կիրառումն ու խթանումը: Միեր Գրիգորյանն ընդգծեց, որ այս տեսակի միջազգային համաժողովը Հայաստանում աննախադեպ իրադարձություն է այս ոլորտի համար: Ելույթով հանդես եկավ նաև ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը՝ ընդգծելով, որ արբիտրաժային և հաշտարարության ինստիտուտների զարգացումը մշտապես եղել է ՀՀ արդարադատության նախարարության դատաիրավական բարեփոխումների ռազմավարական ուղղություններից մեկը, և այսօրինակ հաստատություններին աջակցումը նախարարության հանձնառությունն է: ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը ընդծեց, որ մեծ պատիվ է գտնվել Հայաստանի անդրանիկ արբիտրաժային կոնֆերանսին: Անդրադառնալով Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի ստեղծմանը՝ Մարտին Գալստյանը նշեց, որ այս կառույցը թույլ է տալիս կառուցել ավելի հուսալի ապագա մեր քաղաքացիների համար: Ըստ նրա՝ ամուր հիմքեր ունեցող այս կենտոնը կաջակցի վեճերի այլընտրանքային եղանակներով արդյունավետ լուծմանը և կնպաստի, որպեսզի Հայաստանն իր կուռ տեղն ունենա միջազգային արբիտրաժի ոլորտում:

Միջազգային արբիտրաժային պրակտիկայի խմբի նախագահ Գարի Բորնը[12] կարևորեց վեճերի արագ լուծման համար առցանց աշխատանքի հնարավորությունը: Բորնը նշեց, որ գոյություն ունի փոքր վեճերը առցանց քննելու և արագ լուծելու պրակտիկա, ինչը նպաստում է համակարգի արագ և անխափան աշխատանքին: Նա

[9] https://www.facebook.com/AMCAArmenia/posts/pfbid0UhL7AboHgfvk6yRKbYn9tLPCKLzzfyHfgoxd9Uiyz5ftAGcoc4G88TdfqfDA6NgGl
[10] https://www.facebook.com/AMCAArmenia/posts/pfbid02qb1sMDKiMWsTNaGM4hGZMfBDw8TrQ7CWREiBJEcktZQvUpXZDFanWNX2dZNwBbJzl
[11] https://www.youtube.com/watch?v=sh-Tkgswyg4
[12] https://www.facebook.com/AMCAArmenia/posts/pfbid02Ra3a2Y5MPsFgHbAiSAgVpH7r9yXft6z94MjySC52KSxJokjwFVeAh5gkMxDkFefvl

Նկար 10. Միջազգային արբիտրաժային պրակտիկայի խմբի նախագահ Գարի Բորնը

ընդգծեց, որ ամբողջ աշխարհից բիզնեսներն այժմ նախընտրում են միջազգային առևտրային արբիտրաժը, ինչպես նաև ներդրումային արբիտրաժը՝ որպես իրենց միջև վեճերի լուծման միջոց: Նա ընդգծել է, որ եթե կողմերը չկարողանային լուծել իրենց վեճերը, ապա կզրկվեին հետագա գործունեությունից և զարգացումից: Գարի Բորնը նաև սահմանեց 6E-եր, որոնք կարելի է հաշվի առնել պայմանագրեր ստորագրելիս՝ 1. Փորձաքննություն, 2. Արագություն, 3. Արդյունավետություն, 4. Հմտություն, 5. Կատարում և 6. Էլեկտրոնային հարթակի առկայություն:[13]

Համաժողովն ունեցել է հետևյալ նիստային հաջորդականությունը.

<u>Նիստ 1.</u> «Հայաստանը որպես ներդրումային կենտրոն. ներդրողների վստահության ամրապնդումը արբիտրաժի միջոցով»[14] Արբիտրաժի միջոցով ներդրողների վստահության խթանում (մոդերատոր՝ Դեմիեն Իսթման, Գլխավոր խորհրդատուի տեղակալ, ԱՋԲ): Առաջին պանելային քննարկման ժամանակ բանախոսները, ի թիվս այլ հարցերի, ընդգծեցին հետևյալը՝

- Վեճերի այլընտրանքային լուծումների առկայությունը հատկապես կարևոր է ներդրումային միջավայրի բարելավման համար:
- Արբիտրաժը, որպես վեճերի լուծման այլընտրանքային մեթոդ, կարող է խթանել բիզնեսը, ինչպես նաև աջակցել սպառողներին:
- Ռուսաստանից Հայաստան տեղափոխված ձեռնարկությունների բիզնես վեճերի լուծումը կարող է իրականացվել արբիտրաժի միջոցով:
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բարենպաստ է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային վեճերն արբիտրաժի միջոցով լուծելու համար:
- Ռուսաստանի Դաշնությունում ծագող վեճերը կարող են լուծվել Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի միջոցով:
- Արբիտրաժը Հայաստանում կարող է կամուրջ դառնալ Ռուսաստանի և Արևմուտքի միջև վեճերի լուծման համար.

[13] 1. Expertise, 2. Expedition, 3. Efficiency, 4. Even handedness, 5. Enforceability and 6. Electronic.
[14] Armenia as an Investment Center: Strengthening Investor Confidence through Arbitration - AMC (amca.am)

- Վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների մասին տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով ուսանողները և ասպիրանտները կարող են ներգրավվել Կենտրոնի գործունեությանը և ծանոթանալ նման կառույցներում գործերի վարման պրակտիկային.
- Այն, որ արդեն կա AMCA-ն դա երկարատև ու ինտենսիվ աշխատանքի արդյունք է: Այս Կենտրոնը կարող է էական ազդեցություն ունենալ տնտեսական զարգացման և ուղիղ ներդրումների ներգրավման վրա: Այն մեծ պոտենցիալ ունի ազդելու Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա, ինչպես դա եղել է Շվեդիայում և Կանադայում:

Նկար 11. Առաջին պանելային քննարկում

Առաջին պանելային քննարկումը վարում էր Դեմիեն Իսթմանը (Ասիական զարգացման բանկի գլխավոր խորհրդականի տեղակալ): Նա ընդգծեց, որ կմշակվի արբիտրաժային ամուր համակարգ՝ ներդրումները հեշտացնելու և վեճերի լուծման համար: ԱՀՀԿ-ի միջոցով վեճերի լուծումը կլինի ավելի պարզ և կնպաստի երկրի տնտեսական աճին: Վրաստանի արբիտրաժային կենտրոնի ներկայացուցիչն էլ նշեց, որ իրենք պատրաստ են կիսվել իրենց փորձով:

<u>Նիստ 2.</u> «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի ստեղծումը»[15] (մոդերատոր՝ Տիգրան Դադունց, «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի տնօրեն): Երկրորդ պանելային քննարկման ժամանակ բանախոսները կարևորեցին հետևյալ կետերը.

- Արբիտրաժի օգնությամբ տնտեսական առումով ևս ՀՀ-ն աշխարհի հետ համագործակցության մեծ եզրեր կունենա: Մենք պատրաստ ենք լինել կառույցի կողքին և նպաստել վերջինիս զարգացմանը: Սա մեզ համար մարտահրավեր է և միաժամանակ մեծ պատիվ (Հարութ Սամրա, ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցիչ):

[15] Launch of the Arbitration and Mediation Center of Armenia - AMC (amca.am)

- ԱՀՀԿ-ն ունի մշակված բավականին ճկուն արբիտրաժային կանոններ, որոնք լիովին համապատասխանում են միջազգային ստանդարտներին: ԱՀՀԿ-ն առաջարկում է առաջադեմ էլեկտրոնային ծառայություններ իր հաճախորդներին և կարճ ժամկետներ տեղական և միջազգային վեճերի լուծման համար (ԱՀՀԿ-ի փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյան):

Նկար 12. Երկրորդ պանելային քննարկում

Երկրորդ պանելային քննարկմանը մասնակցում էր նաև Կենտրոնի տնօրեն Տաթևիկ Մատինյանը, ով շնորհակալություն հայտնեց միջոցառումը կազմակերպող բոլոր գործընկերներին և Կենտրոնի հիմնադիրներին: Նա նշեց, որ կենտրոնի մարմինները՝ Հոգաբարձուների խորհուրդը կազմված է բիզնեսի, հայկական սփյուռքի մասնագիտական կենտրոնների ներկայացուցիչներից, իսկ Արբիտրաժային Խորհուրդը բաղկացած է արբիտրաժի ոլորտում հեղինակավոր մասնագետներից: Ավելին, Արբիտրաժային խորհրդին վստահված են այնպիսի կարևոր գործառույթներ, ինչպիսիք են արբիտրների նշանակումը և հաստատումը, նրանց որակազրկման վերաբերյալ դիմումների վերանայումը և այլն: Կենտրոնն իր շահառուներին առաջարկում է համապարփակ արբիտրաժային կանոններ՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա, հեղինակավոր և պրոֆեսիոնալ արբիտրներ, վերապատրաստված անձնակազմ, որը կարող է վարել արբիտրաժային և հաշտարարության գործեր: Նա ընդգծեց նաև էլեկտրոնային հարթակի կարևորությունը, որը 21-րդ դարի կարևոր հատկանիշն է և որը հնարավորություն է տալիս ամբողջ աշխարհից մասնակիցների ներգրավվել գործերի վարույթում:

<u>Նիստ 3</u>: «Կառուցապատման և հանքարդյունաբերության ոլորտի վեճեր»[16] (մոդերատոր՝ Ֆրանց Տ. Շվարց, Միջազգային արբիտրաժային պրակտիկայի խմբի փոխնախագահ, Wilmer Cutler Pickerinh Hale և Dorr LLP): Երրորդ պանելային քննարկումը վերաբերում էր կառուցապատման ոլորտում առկա վեճերին:

[16] Construction and mining disputes - AMC (amca.am)

Բանախոսները նշեցին, որ այս ոլորտում ծագող վեճերը նույնպես հեշտությամբ լուծվում են բանիմաց արբիտրների օգնությամբ:

Նկար 13. Երրորդ պանելային քննարկում

«Կառուցապատողների ազգային ասոցացիա»-ի նախագահ Գուրգեն Գրիգորյանը խոսեց շինարարության՝ արբիտրաժային ոլորտի առանձնահատկություններից: Նրանց ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այս ոլորտում կան երկու բնույթի վեճեր՝ մասնավոր իրավական սուբյեկտների միջև և համայնքային վեճեր (մի կողմը համայնքն է կամ պետությունը): Վերջինս առավել հաճախ հանդիպում է պետական գործառույթների իրականացման համատեքստում: Գուրգեն Գրիգորյանն ընդգծեց, որ կառուցապատողները ցանկանում են նաև դադարեցնել պայմանագիրը անբարեխիղճ գնորդի հետ և տունը վաճառել մեկ ուրիշին: Իրենց պրակտիկայում հանդիպած նման վեճը դատարաններում տևել է 4 տարի: Կառուցապատողները հաճախ չեն դիմում դատարան, քանի որ վարչական արդարադատությունը տարիներ է պահանջում: Վեճերը ծագում են ժամանակի ձգձգումների պատճառով, իսկ իրավապայմանագրային հարաբերություններում կարևոր է արբիտրաժի դերը»:

<u>Նիստ 4:</u> «Էներգետիկայի և կլիմայի փոփոխության վեճեր»[17] (մոդերատոր՝ Քրիստինա Պակ, ԱՌԲ, Իրավական և քաղաքականության բարեփոխումների գլխավոր խորհրդական և թիմի ղեկավար):

Այս նիստում բանախոսները առանձնացրին այս ոլորտում ծագող վեճերի առանձնահատկությունները և ընդգծեցին, որ արբիտրաժը առավել հարմար է նմանաբնույթ վեճերի լուծման համար: Սեդա Շահինյանը (Հանձնակատար, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով), պանելային քննարկման իր ելույթի ժամանակ, նշեց, որ էլեկտրաէներգիայի շուկան պետք է ազատականացվի, և դրա համար առաջին քայլերն արված են: Նա ընդգծեց, որ 2022 թվականին այս ոլորտը մենաշնորհայինից անցել է մրցակցայինի: Մեկ միլիոն սպառողներ

[17] Energy and climate change disputes - AMC (amca.am)

հնարավորություն են ստացել ընտրելու իրենց մատակարարին: Նա նշեց, որ մեր օրերում երեսուն ընկերություններ կարող են այս շուկայում վաճառել իրենց արևային մարտկոցների արտադրած էներգիան և նախատեսվում է վերականգնվող արևային էներգիայի այս ծավալը մինչև 2030 թվականը հասցնել 1000 մեգավատի՝ ներկայիս 210-ի փոխարեն: Սեդա Շահինյանն ընդգծեց, որ իրենք բաց են այս ոլորտում արբիտրաժային նոր մեխանիզմներ ներդնելու համար:

Նկար 14. Չորրորդ պանելային քննարկում

Նիստ 5: «Ֆինանսական վեճեր»[18] (մոդերատոր՝ Պատրիսիա Շոնեսի, Ստոկհոլմի համալսարանի իրավաբանական ամբիոնի դոցենտ):

Քննարկման ընթացքում Կենտրոնական բանկի իրավաբանական վարչության պետ Արման Ալոյանն անդրադարձավ ֆինանսական վեճերի լուծման ուղիներին՝ կարևորելով արբիտրաժը և ընդգծելով դրա առավելությունները ֆինանսական հատվածի համար: Ֆինանսական համակարգի հաշտարար Փիրուզ Սարգսյանը ներկայացրեց ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտի դերն ու գործառույթները:

Նկար 15. Հիգերորդ պանելային քննարկում

«Լեգալատա» իրավաբանական ընկերության ներկայացուցիչ Գոռ Մարգարյանն ընդգծեց, որ բանկերը նախընտրում են ֆինանսական վեճերը լուծել արբիտրաժի

[18] Financial Disputes - AMC (amca.am)

միջոցով: Նա անդրադարձավ այն մարտահրավերներին, որոնց Կենտրոնը հավանաբար կբախվի ֆինանսական վեճերը լուծելիս: Պատրիսիա Շոնեսին կարևորեց միջազգային արբիտրաժային կենտրոնների և ԱՀՀԿ համագործակցությունը՝ նշելով, որ փորձի փոխանակումը թույլ կտա կենտրոնի գործունեությանը համահունչ լինել միջազգային փորձին:

Նիստ 6: «Նոր զարգացումներ՝ վեճերի լուծման ոլորտում»[19] (մոդերատոր Գալինա Զուկովա, գործընկեր, ZUKOVA Իրավաբանական):

Վեցերորդ պանելային քննարկման ընթացքում միջազգային հաշտարար Մուշեղ Մանուկյանն անդրադարձավ հաշտարարության ինստիտուտի կարևորությանը: Նա նշեց, որ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի բացումն իրապես հրամայական է. այն ՀՀ-ում հնարավոր կդարձնի անկախ և վստահելի կենտրոնի միջոցով վեճերի այլընտրանքային լուծումը: Քեթրին Ռոջերսն անդրադարձավ այն կարևոր միջոցառումներին, որոնք թույլ կտան քաղաքացիներին վստահություն ձևավորել ԱՀՀԿ-ի նկատմամբ: Այս համատեքստում նա ընդգծեց Կենտրոնի անկախության գործոնը: Պանելային քննարկման ընթացքում քննարկվել են վեճերի լուծման էլեկտրոնային մեթոդները, ինչպես նաև վեճերի լուծման ոլորտում արհեստական բանականության կիրառման հարցերը:

Նկար 15. Վեցերորդ պանելային քննարկում

Բանախոսների և լուսաբանվող թեմաների մասին համապարփակ տեղեկատվություն կարելի է գտնել միջոցառման օրակարգում[20]:

[19] New Developments in Dispute Resolution - AMC (amca.am)
[20] amca.am/wp-content/uploads/2023/09/FINAL-Armenia-Pre-Conference-Booklet.pdf

Նկար 16. Համաժողովի բուկլետի կազմը

Համաժողովի ընթացքում լուրջ հարցազրույցներ են անցկացվել միջազգային փորձագետների հետ արբիտրաժի հետ կապված կարևորագույն հարցերի շուրջ: Հետագա փուլում 5 առանձին հարցազրույցներ են անցկացնել՝ «Կառավարման խորհուրդը և նրա ներդրումը»[21], «Ո՞րն է ԱՀՀԿ-ի առաքելությունը»[22], «Արբիտրների էթիկայի կանոնների մասին»[23], «Ինչպես է գործում միջազգային արբիտրաժը»[24] և «Համագործակցությունը հայկական արբիտրաժային կենտրոնի հետ»[25] թեմաներով, ինչպես նաև նկարահանվել է ամբողջ միջոցառումն ամփոփող ֆիլմ[26]:

XVI. Արբիտրաժային շաբաթ[27]

Միջազգային արբիտրաժային վերոհիշյալ համաժողովը Արբիտրաժային շաբաթվա իրադարձություններից միայն մեկն էր, քանի որ հաջորդ օրերին տեղի ունեցավ նաև մշակութային շրջայց օտարերկրացի հյուրերի համար, արբիտրաժային կենտրոնի կառավարման դասընթաց ԱՀՀԿ անձնակազմի համար, կլոր սեղան-քննարկում իրավաբանների, փաստաբանների և արբիտրների համար, միջազգային առևտրային արբիտրաժային սեմինար Հայաստանում մասնավոր բիզնեսի հատվածի համար:

Ասիական զարգացման բանկի[28] Իրավական և քաղաքականության բարեփոխումների ծրագրի աջակցությամբ ԱՀՀԿ անձնակազմի համար արբիտրաժային կենտրոնի գործունեության վերաբերյալ 2023թ. սեպտեմբերի 6-ին

[21] Steering Committee and its input (youtube.com)
[22] What is the mission of AMCA (youtube.com)
[23] About Ethic rules of arbitrators - YouTube
[24] How International Arbitration Functions (youtube.com)
[25] Cooperation with Armenian Arbitration Centre (youtube.com)
[26] Inaugural Armenia. International Arbitration Conference. (youtube.com)
[27] Արբիտրաժի և հաշտարարության ինստիտուտը ՀՀ-ում ներդնելու հնարավորությունը. 7-օրյա կոնֆերանս (youtube.com)
[28] Training for AMCA Staff - AMC

անցկացվել է վերապատրաստման դասընթաց: Շրջանառվող թեմաներն էին՝ ա) Նորաստեղծ կենտրոնի հիմնադրում և կազմակերպում, բ) Գործերի վարման էլեկտրոնային համակարգ գ) ԱՀՀԿ ծառայությունների մարքեթինգ դ) Արբիտրների նշանակում:

Արդունավետ քննարկումներ ծավալվեցին արբիտրաժային հաստատությունների գործառույթների և քարտուղարության, գլխավոր քարտուղարի և արբիտրաժային խորհրդի գործունեության առանձնահատակությունների, նրանց հիմնական գործառույթների, պարտականություններ, ինչպես նաև վճիռների կայացման հաջող գործընթացի հիմնական տարրերի վերաբերյալ: Մանրամասն քննարկվեցին գործերի կառավարման ներքին և արտաքին խնդիրները, և բանախոսների կողմից ընդգծվեցին հետաքրքիր խորհուրդներ, որոնք կարող են ավելի արդյունավետ դարձնել ԱՀՀԿ-ի աշխատանքը:

Նկար 17. Վերապատրաստում AMCA-ի աշխատակազմի համար

Վերապատրաստման դասընթացը վարել են.

- Դոկտոր Անդրեա Կարլեվարիսը, ով BonelliErede-ի գործընկեր է և միջազգային իրավունքի պրոֆեսոր: 2012 թվականի սեպտեմբերից մինչև 2017 թվականի մայիս ընկած ժամանակահատվածում դոկտոր Կարլեվարիսը եղել է Միջազգային առևտրային պալատի (ICC) գլխավոր քարտուղարը և ICC-ի վեճերի լուծման ծառայությունների տնօրենը: Դոկտոր Կարլեվարիսը ներկայումս Իտալիայի արբիտրաժային ասոցիացիայի (AIA) նախագահն է: Նա նաև Ստոկհոլմի Առևտրի պալատի (SCC) արբիտրաժային ինստիտուտի խորհրդի անդամ է:
- Անետ Մագնուսոնը, ով Կլիմայի փոփոխության խորհրդի համահիմնադիրն է: Կառույցի նպատակն է մոբիլիզացնել օրենքը և իրավաբաններին՝ կլիմայի փոփոխության դեմ գործողությունների համար: Անետ Մագնուսոնն ունի միջազգային իրավունքի ավելի քան 20 տարվա փորձ, այդ թվում՝ համաշխարհային իրավաբանական ընկերություններում: Նախքան Կլիմայի

փոփոխության հարցերով խորհրդի համահիմնադիր դառնալը, տիկին Մագնուսոնը ավելի քան տասը տարի եղել է Ստոկհոլմի Առևտրի պալատի արբիտրաժային ինստիտուտի գլխավոր քարտուղարը (SCC):

- Քևին Նաշը Սինգապուրի միջազգային արբիտրաժային կենտրոնի քարտուղարության ռեգիստրի՝ գործերի կառավարման և ծառայությունների մատուցման գործերով ղեկավարողն է: Ավելի քան մեկ տասնամյակ Քևինը վերահսկել է հազարավոր միջազգային գործերի վարումը SIAC կանոնների և UNCITRAL (ՄԱԿ-ի միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողով) արբիտրաժային կանոնների բոլոր տարբերակների համաձայն:

Միջոցառման հիմնական արդյունքն էր ԱՀՀԿ-ի նորաստեղծ անձնակազմին փոխանցել քարտուղարության արդյունավետ և ծախսախնայող աշխատանքի կազմակերպման համար կարևոր կետերի և առաջիկա մարտահրավերների մասին գիտելիքներ և հմտություններ:

Նկար 18. Արբիտրաժային շաբաթվա մասնակիցները «Արարատ» կոնյակի գործարանում

Արբիտրաժային շաբաթվա ընթացքում կազմակերպվեցին նաև մշակութային միջոցառումներ: Դրանցից մեկն էր սեպտեմբերի 5-ին 45 հյուրերի համար նախատեսված էքսկուրսիան դեպի հայկական պատմական Արարատ կոնյակի գործարան, որտեղ հյուրերը ծանոթացան ընկերության պատմությանն ու զարգացմանը և ճաշակեցին հնեցված կոնյակներ: Մշակութային միջոցառման երկրորդ մասում հյուրերն այցելեցին Գառնու տաճար և Գեղարդի վանք, որտեղ նրանց ներկայացվեց քրիստոնեության հնագույն մշակութային ժառանգությունը և պատմությունը: Հյուրերի համար կազմակերպվել էր նաև ջերմ ընդունելություն հայկական ավանդական երաժշտությամբ, լավաշի թխմամբ և ազգային ուտեստների համտեսով:

Սեպտեմբերի 6-ին տեղի ունեցավ ևս մեկ միջոցառում՝ կլոր սեղան-քննարկում իրավաբանների, փաստաբանների և արբիտրների հետ: Միջոցառումը բաղկացած էր երեք հանդիպումներից՝ նվիրված հետևյալ թեմաներին[29].

- Արբիտրաժային գործի նախաձեռնում (արբիտրաժային համաձայնագիր. համաձայնագրի կառուցվածքը, անհրաժեշտ պայմանները, անվավերության հիմքերը, արբիտրաժի ծանուցումը և պատասխանը, արբիտրի թեկնածուի ընտրությունը, արբիտրի բացարկը): Հանդիպման բանախոսն էր Թոմաս Սնայդերը, ով ԱՀՀԿ Արբիտրաժային խորհրդի անդամ է և ղեկավար գործընկեր ղեկավար Charles Russell Speechlys LLP-ում:

Նկար 19. Կլոր սեղան-քննարկում իրավաբանների, փաստաբանների և արբիտրների հետ

Կիրառելի իրավունքի ընտրության վերաբերյալ կարգավորումներ (կիրառելի իրավունքի ընտրության վերաբերող նորմերի ուսումնասիրություն, կողմերի ինքնավարության սկզբունք, արբիտրաժի վայրի օրենսդրություն, արբիտրաժային հաստատության ստանդարտ կանոններ): Նիստի բանախոսներն էին Անդրեա Ատերիտանոն, գործընկեր և Ջովաննի Զառրան՝ Hogan Lovells-ի (Հռոմ) ավագ գործընկեր:

- ԱՀՀԿ-ն և դրա արբիտրաժային կանոնները (ԱՀՀԿ-ի հիմնադրումը, նրա կառուցվածքը, դերը, նպատակները, Արբիտրաժային կանոններն ու դրանց կիրառումը, սահմանումները, գրավոր հաղորդագրությունները, արբիտրաժի սկիզբը, արբիտրաժային տրիբունալի կազմը, արբիտրաժային վճարները և այլն): Նիստի բանախոսն էր ԱՀՀԿ-ի փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյանը:

[29] https://www.facebook.com/AMCAArmenia/posts/pfbid02Da3XdM7YfAF17YmgvM8uBF1LriuJKh1MbCZDthJS4WFZJNqVDHVCEB8QDJb12iGyl

XVII. Դատավորների վերապատրաստում Արդարադատության ակադեմիայում

Արդարադատության ակադեմիան «Արբիտրաժ և հաշտարարություն» մոդուլը ներառել է դատավորների 2023 թվականի վերապատրաստման ծրագրի[30] ցանկում և դասախոսության էր հրավիրել Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյանին:

Արդյունքում, 2023 թվականի հոկտեմբերի ընթացքում, Լիլիթը տարեկան վերապատրաստման ծրագրի շրջանակներում, դասախոսություններ է կարդացել Արդարադատության ակադեմիայում դատավորների և դատավորների թեկնածուների համար[31]: ԱՀՀԿ փոխտնօրենն անցկացրել է 4-6 ժամ տևողությամբ 6 դասընթաց:

Վերապատրաստման դասընթացներին մասնակցել է շուրջ 80 դատավոր: ԱՀՀԿ-ն ծավալուն զեկույց է պատրաստել (120 սլայդ)՝ անդրադառնալով հետևյալ թեմաներին.

Նկար 20. Լիլիթ Պետրոսյանը դատավորների վերապատրաստման ընթացքում

- Ինչ է արբիտրաժը,
- Որո՞նք են արբիտրաժի առավելությունները,
- Ինչ է իրավարարությունը,
- Ժամանակավոր և ինստիտուցիոնալ արբիտրաժի դերը և դրանց տարբերությունները,
- ԱՀՀԿ-ն որպես ինստիտուցիոնալ արբիտրաժային կենտրոն,
- ԱՀՀԿ-ի նպատակները, թիրախները ու գործառույթները,
- Արբիտրաժային համաձայնագիրը և դրա կարևորությունը,
- Արբիտրաժային համաձայնագրի բովանդակությունը և դրա պահանջները.
- Արբիտրաժային համաձայնագրերի վավերականությունը,
- Արբիտրաժային տրիբունալի կազմը,
- Արբիտրաժային տրիբունալի իրավասությունը,
- Իրավարար վճռի կայացումը և վարույթի դադարեցումը,

[30] https://aoj.am/storage/full-time-education/training-program/j1Qix2IwN13Tt9V7tuXt3JytOWeYaz2oFYkQYoOq.pdf
[31] Training for judges and candidates for judges - AMC (amca.am)

- Իրավարար վճռի վիճարկումը,
- Իրավարար վճռի պարտադիր կատարումը,
- Դատական աջակցություն արբիտրաժին,
- Հաշտարարությունը և դրա դերը,
- Հաշտարարության իրականացում,
- Հաշտարարության և հաշտության համաձայնագիր,
- Պարտադիր հաշտարարություն,
- Հաշտարարը և նրա դերը:

Թեմաները քննարկվել են Հայաստանի օրենսդրության, միջազգային լավագույն փորձի, միջազգային արբիտրաժի ոլորտում կիրառելի նախադեպերի, ինչպես նաև միջազգային ամենահայտնի արբիտրաժային կենտրոնների փորձի լույսի ներքո, ինչպիսիք են ICC, LCIA, SIAC, VIAC, DIAC: Բացի այդ, ներկայացվել է նաև ԱՀՀԿ-ի արբիտրաժի կանոնները:

Դասընթացների ընթացքում դատավորները բարձրացրել են տարբեր հարցեր և իրավիճակներ, որոնց բախվել են գործնականում: Այս հարցերը հավաքվել և բարձրացվել են օրենքում առկա իրավական բացերի քննարկման ժամանակ:

Դասընթացները հաջող էին և օգտակար ոչ միայն դատավորների, այլև ԱՀՀԿ-ի համար: Արդյունքում «Արբիտրաժ և հաշտարարություն» մոդուլը ներառվել է նաև դատավորների 2024 թվականի վերապատրաստման ծրագրի ցանկում:[32]

Նկար 21. Լիլիթ Պետրոսյանը Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի վերապատրաստման ընթացքում

II. Դասընթաց Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի համար

2023 թվականի հոկտեմբերին «Օրենսդրության զարգացման կենտրոն»-ը կազմակերպել էր երկօրյա «Կարողությունների զարգացման» դասընթաց Էկոնոմիկայի նախարարության աշխատակիցների համար և հրավիրել Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան գրասենյակի փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյանին՝ ներկայացնելու ԱՀՀԿ-ն և նրա արբիտրաժի կանոնները: Հիմնական թեմաներն էին՝ ԱՀՀԿ-ի հիմնադրումը, կառուցվածքը, դերը,

[32] https://aoj.am/storage/full-time-education/training-program/VSGL1Otuhn9JvpLccZTdw3IjETuc0h3fBHJW7rLG.pdf

թիրախները, Արբիտրաժային կանոններն ու դրանց կիրառումը, սահմանումները, գրավոր հաղորդագրությունները, արբիտրաժի սկիզբը, արբիտրաժային տրիբունալի կազմը, արբիտրաժային վճարները և այլն:

XIX. Հաշտարարների համար դասընթացների համաֆինանսավորում

Նոյեմբերի 17-ից 25-ը հաշտարարների համար անցկացվեց ութօրյա վերապատրաստման դասընթաց՝ «Աջակցություն արդարադատության բարեփոխումներին Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Դասընթացավարներն էին ԵՄ փորձագետներ Սոֆիո Չաչավան և Ռամոն Թենան: Նախագծին մասնակցել է 20 մասնակից: Նրանցից 7-ը եղել են լիցենզավորված հաշտարարներ: Լիցենզավորված հաշտարարների համար սա կարևոր փորձ էր, իսկ մյուսների մասնակցիների համար՝ որակավորման քննությանը մասնակցելու հնարավորություն: Ծրագրի նպատակն էր զարգացնել վեճերի այլընտրանքային լուծումը՝ որակավորված հաշտարարների միջոցով: Հարկ է ընդգծել, որ բարեփոխումն իր հերթին նպատակ ունի թեթևացնել դատական ծանրաբեռնվածությունը:

Նկար 22. Հաշտարարների լիցենզավորման հավաստագրերի տրամադրման պաշտոնական արարողությունը

Դասընթացի ընթացքում ներկայացվել են հետևյալ թեմաները.

- Ծանոթություն ՎԱԼ մեթոդներին և բանակցություններին:
- Նոր տեսանկյուն կոնֆլիկտների վերաբերյալ:
- Հաշտարարության գործընթացի առանձնահատկությունները, հաշտարարի վարքագծի կանոնները, իրավունքներն ու պարտականությունները:
- Հաղորդակցման գործիքներ:
- Փոփոխություններ հաշտարարության մասին օրենքում, լիցենզավորված հաշտարարների ռեեստրում, պարտադիր

հաշտարարության իրականացման առանձնահատկությունները, հաշտարարության պայմանագրի մշակումը:

- Հաշտարարի պրոֆիլը:
- Հաշտարարության նախապատրաստում:
- Հաշտարարությունն աշխատանքային վեճերում. աշխատանքային օրենսդրության սկզբունքներ, գործատուի և աշխատողի իրավունքներ և պարտականություններ, աշխատանքային պայմանագիր և դադարեցման հիմքեր, աշխատանքային ժամեր և հանգստի իրավունք:
- Հետաքրքրությունների և կարիքների նույնականացում:
- Հաշտարարություն հարևանային իրավունքի և վարկային պայմանագրերի հետ կապված վեճերում՝ վերլուծելով հաշտարարության պայմանագրի բնութագրերը:
- Հաշտարարություն ընտանեկան վեճերում՝ ամուսնության կնքում և ամուսնալուծություն, ամուսինների անձնական իրավունքներն ու պարտականությունները, ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները, ալիմենտի պարտականությունները:
- Դատական գործով լիցենզավորված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարության գործընթաց սկսելը, արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական հաշտարարության համաձայնագրի հաստատման վարույթի առանձնահատկությունները.

Նկար 23. Հաշտարարության դասընթացների ընթացքը

2023 թվականի դեկտեմբերի 28-ին Արդարադատության նախարարության կողմից գրավոր (2023 թվականի դեկտեմբերի 1-ին) և բանավոր (2023 թվականի դեկտեմբերի 17-ին) քննություններ անցկացնելուց հետո անցկացվեց 19 հաշտարարների

որակավորման լիցենզիաներ տրամադրելու պաշտոնական արարողություն, որոնցից 14-ը նոր լիցենզավորված հաշտարարներ են:

XX. Դասընթացներ բիզնեսի և իրավաբանական ընկերությունների ներկայացուցիչների համար

Դեկտեմբերի 1-ից 3-ը բիզնեսի և իրավաբանական ընկերությունների ներկայացուցիչների համար անցկացվել են եռօրյա վերապատրաստման դասընթացներ:

Հանդիպումները վարում էին ինչպես ազգային, այնպես էլ միջազգային դասընթացավարներ:

Նկար 24. Բիզնեսի և իրավաբանական ընկերությունների ներկայացուցիչների համար դասընթաց, օր 1

Կենտրոնի տնօրեն Տաթևիկ Մատինյանն առաջին օրը ներկայացրեց Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը, դրա դերն ու գործառույթները:

Երկրորդ օրվա առաջին բանախոսը Հայկ Հովհաննիսյանն էր, ով Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի Արբիտրաժային խորհրդի անդամ է՝ «ՀԱՊ» իրավաբանական ընկերության կառավարիչ գործընկեր: Նրա ելույթի թեման էր՝ «*Ինչ է արբիտրաժը և որոնք են դրա առավելությունները*»: Նա ներկայացրեց ՀՀ-ում արբիտրաժի ձևավորման և ստեղծման նախապատմությունը, արբիտրաժի ստեղծման համար առկա խոչընդոտները, ինչպես նաև արբիտրաժի առավելությունները: Բանախոսն ընդգծեց Կենտրոնի ներուժը արդյունավետ և մասնագիտական վեճերի լուծման համար:

Երկրորդ օրվա երկրորդ բանախոսն էր Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի Արբիտրաժային խորհրդի անդամ, Լոնդոնի համալսարանի միջազգային իրավունքի մասնագիտությամբ ի.գ.թ., տիկին Աիդա

Ավանեսյանը: Նրա ելույթի թեման էր «*Արբիտրաժով լուծվող վեճեր*»: Բանախոսը մասնակիցներին ներկայացրեց այն գործերի շրջանակը, որոնք կարելի է քննել արբիտրաժի միջոցով՝ կարևորելով միջազգային փորձն ու տեղական մոտեցումները: Քննարկվել են նաև արբիտրաժային տրիբունալի իրավասության վիճարկման, իրավասության հարցում կիրառելի օրենքի հետ կապված հարցեր:

Հաջորդ բանախոսը Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի ներկայացուցիչ Լիլիթ Գաբրիելյանն էր: Նրա ելույթի թեման էր «Հաշտարարությունը և դրա առավելությունները»: Բանախոսը ներկայացրեց հաշտարարության էությունը, առանձնահատկությունները, առավելություններն ու տեսակները: Իրավիճակային խնդիրների քննարկման միջոցով մասնակիցներին ներկայացվեց հաշտարարության դերը և դրա իրականացման կարգը:

Նկար 25. Բիզնեսի և իրավաբանական ընկերությունների ներկայացուցիչների համար դասընթաց, օր 2 և 3

Երրորդ օրվա բանախոսներն էին Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի Արբիտրաժային խորհրդի անդամ, ի.գ.թ., Լոնդոնի Քինգս քոլեջի համալսարանի դասախոս Հայկ Կուպելյանցը է, և ի.գ.թ., Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյանը: Պարոն Կուպելյանցը խոսեց «Արդյունավետ արբիտրաժային վերապահումներ» թեմայով: Բանախոսը ներկայացրեց ինստիտուցիոնալ արբիտրաժի առանձնահատկությունները, անդրադարձավ եվրոպական, ասիական, ամերիկյան մոդելներին և փորձին: Բանախոսը քննարկեց նաև արդյունավետ արբիտրաժային համաձայնագրի մշակման, պայմանագրի անվավերության և այլ հարցեր:

Որպես բանախոս հանդես եկավ նաև ԱՀՀԿ-ի փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյանը, ում ելույթի թեման էր «*Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի արբիտրաժային կանոնները*»: Տիկին Պետրոսյանը ներկայացրեց կանոնների կառուցվածքը, ինչպես նաև կանոնների հիման վրա արբիտրաժային վարույթը՝

սկսած արբիտրաժային կենտրոնին դիմում ներկայացնելուց մինչև արբիտրաժային վճիռ կայացնելը:

XXI. Դասընթացներ դատավորների և արբիտրների համար

Դեկտեմբերի 8-ից 10-ը դատավորների և արբիտրների համար անցկացվեցին եռօրյա վերապատրաստման դասընթացներ: Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի տնօրեն Տաթևիկ Մատինյանը ներկայացրեց Կենտրոնի կառուցվածքը, անկախության երաշխիքները, դերը և կատարած աշխատանքները:

Նկար 26. Իտալիայի արբիտրաժային ասոցիացիայի նախագահ Անդրեա Կարլեվարիս

Ելույթների շարքը շարունակեց Կենտրոնի արբիտրաժային խորհրդի անդամ, Իտալիայի արբիտրաժային ասոցիացիայի նախագահ Անդրեա Կարլեվարիսը: Նա կարևորեց պետական դատարանների դերը արբիտրաժային վարույթում, ներկայացրեց միջազգային արբիտրաժի հայեցակարգն ու դերը, առևտրային և ներդրումային արբիտրաժների էությունը, ինչպես նաև արբիտրաժին դատական աջակցության տրամադրման մեթոդները և դրանց իրականացման կարգը: Կարլեվարիսն անդրադարձավ նաև մշտական արբիտրաժային ինստիտուտների դերին՝ ներկայացնելով նման կենտրոնների գործառույթները (մասնավորապես՝ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն), կողմերի և արբիտրաժային տրիբունալի հետ աշխատանքի շրջանակը, արբիտրների նշանակման կարգը՝ վերլուծելով նրանց հանդիպող մարտահրավերները, և այլ հարցեր:

«*Արբիտրաժային վճիռների ճանաչում և կատարում*» թեմայով օրվա վերջին ելույթով հանդես եկավ Կենտրոնի արբիտրաժային խորհրդի անդամ, ի.գ.թ., Լոնդոնի Քինգս քոլեջի դասախոս Հայկ Կուպելյանցը: Պարոն Կուպելյանցը նախ անդրադարձավ հասարակական կարգի նկատառումներով արբիտրաժային վճիռը չեղյալ համարելու հիմքերին և կարգին, ապա բանախոսը ներկայացրեց, թե ինչ է

հասարակական կարգը և որ դեպքերում է այն հիմք ընդունվում արբիտրաժային վճիռը չեղյալ համարելու համար՝ կարևորելով գործող միջազգային փորձն այս առումով:

Նկար 27. Դատավորների և արբիտրների համար դասընթացի ընթացքում

Երրորդ օրը Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյանը ներկայացրեց կանոնների կառուցվածքը, ինչպես նաև կանոնների հիման վրա արբիտրաժային վարույթը՝ սկսած արբիտրաժային կենտրոնին հարցում ներկայացնելուց մինչև արբիտրաժային վճռի կայացումը:

Հաջորդ բանախոսն էր Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի արբիտրաժային խորհրդի անդամ, ի.գ.թ. Աիդա Ավանեսյանը, ով ելույթ ունեցավ «*Արբիտրաժի միջոցով լուծվող վեճերը*» թեմայով: Բանախոսը մասնակիցներին ներկայացրեց արբիտրության հետ կապված խնդիրները, արբիտրաժի միջոցով քննվող գործերի շրջանակը՝ առանձնացնելով միջազգային փորձը և տեղական մոտեցումները: Քննարկվել են նաև արբիտրաժային տրիբունալի իրավասության վիճարկման, իրավասության հարցում կիրառելի օրենքի հետ կապված հարցեր:

Նկար 28. «Կոնցեռն Դիալոգ» փաստաբանական գրասենյակի կառավարիչ գործընկեր Արամ Օրբելյանը դասընթացի ընթացքում

«Կոնցեռն Դիալոգ» փաստաբանական գրասենյակի կառավարիչ գործընկեր Արամ Օրբելյանը եզրափակեց ելույթների շարքը՝ ներկայացնելով արբիտրաժային վճիռը չեղյալ համարելու հիմքերը և դրանց առնչվող խնդիրները: Մանրամասն քննարկվեցին նաև արբիտրաժային վարույթում գրավոր հաղորդակցության, արբիտրաժային տրիբունալի ձևավորման,

արբիտրաժային համաձայնագրի վավերականության, արբիտրաժային վճռի ճանաչման և կատարման հետ կապված հարցեր:

XXII. Ուսանողների այցը

Կարևորելով կրթական բաղադրիչը՝ Կենտրոնը հյուրընկալել էր շուրջ 20 ուսանողներ Երևանի պետական համալսարանից, Հայաստանում ֆրանսիական համալսարանից, Եվրասիա միջազգային համալսարանից և ՀՀ պետական կառավարման ակադեմիայից: ԱՀՀԿ-ում նրանք ծանոթացան արբիտրաժի և հաշտարարության առավելություններին, ԱՀՀԿ կառուցվածքին և ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները: Ուսանողներին ներկայացվեց Կենտրոնի գործունեությունը, Հայաստանում արբիտրաժի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները, նորաստեղծ կառույցը, կայքը, դրա հետ աշխատելու գործիքները: Բազմաթիվ հարցերի միջոցով ուսանողները մանրամասն տեղեկատվություն ստացան արբիտրների նշանակման, արբիտրաժային վճռի կատարման և արբիտրաժի արդյունավետության մասին: Ուսանողները նաև տեղեկացան, որ իրավարար վճիռների կատարումը երաշխավորված է ավելի քան 170 երկրներում, որոնք միացել են Նյու Յորքի կոնվենցիային:[33]

Նկար 29. AMCA-ի տնօրեն Տաթևիկ Մատինյանն ուսանողների հետ

XXIII. Հանդիպումներ բիզնեսի ներկայացուցիչների հետ[34]

4 ամիսների ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել տարբեր բիզնեսների ներկայացուցիչների և համապատասխան շահագրգիռ կողմերի հետ: Դեկտեմբերի ընթացքում երկու հանդիպում է տեղի ունեցել բիզնեսի և սպորտի ներկայացուցիչների հետ: Բիզնեսի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի տնօրեն Տաթևիկ Մատինյանը ներկայացրեց Կենտրոնը, արբիտրաժի դերն ու առավելությունները: Նա

[33] Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնում այսօր հյուրընկալվել էին տարբեր բուհերի ուսանողներ - AMC (amca.am)

[34] Տեղեկատվական հանդիպում Հայաստանի սպորտային արդյունաբերության, հեռահաղորդակցության և ապահովագրության ոլորտների ներկայացուցիչների հետ - AMC (amca.am)

մասնավորապես խոսեց այն մասին, թե ինչպես կարող է արբիտրաժը օգնել արդյունավետ և արագ լուծել բիզնես վեճերը: Մասնակիցները հիմնականում ապահովագրական ընկերություններից և բիզնես ոլորտներից էին:

Նկար 30. Հանդիպում բիզնեսնի ներկայացուցիչների հետ

Երկրորդ հանդիպումը սպորտի ոլորտի ներկայացուցիչների հետ էր: Հանդիպմանը ներկա էին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի (ՀՖՖ), «Արարատ», «Շիրակ», «Ուրարտու», «Նոյ» և «Փյունիկ» ֆուտբոլային ակումբների մարզական իրավաբաններ և ղեկավարներ, ինչպես նաև այլ հյուրեր: Ներկայացվեցին Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի ստեղծման նպատակներն ու գործունեության շրջանակները, ինչպես նաև Կենտրոնի կողմից տրամադրվող արբիտրաժային ծառայությունները: Հանդիպման երկրորդ մասը նվիրված էր սպորտային արբիտրաժի կոնկրետ ոլորտին՝ «Սպորտային արբիտրաժ - խնդիրներ և հնարավորություններ» խորագրով: Կենտրոնի իրավաբան Նորայր Բաղդասարյանը ներկայացրեց ԱՀՀԿ-ի տեսլականը Կենտրոնում սպորտային վեճերի լուծման հեռանկարների վերաբերյալ, որից հետո ակտիվորեն քննարկվեցին Հայաստանում սպորտային արբիտրաժի զարգացմանն առնչվող մի շարք հարցեր, օրինակ՝ արբիտրաժի հարցը սպորտային վեճերում, հնարավոր վեճերի ընդհանուր շրջանակը, ՖԻՖԱ-ի վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմները՝ կանոնակարգերի լույսի ներքո և առևտրային բնույթի սպորտային վեճերը Կենտրոնի իրավասությանը ներկայացնելու հնարավորությունները: Հանդիպման մասնակիցները նաև կիսվեցին իրենց փորձով և գործունեության ընթացքում առաջացած խնդիրների մասին՝ կարևորելով մի շարք սպորտային վեճերի ավելի հեշտ լուծման համար ազգային արբիտրաժային անկախ կենտրոնի գործունեությունը, ինչպիսինն է Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը

Համագործակցությունը խթանելու համար՝ հաջողությամբ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել մարզական ակումբների հետ՝ առևտրային վեճերը ԱՀՀԿ փոխանցելու շուրջ: Մոտ ապագայում ուշադրություն կդարձվի Կենտրոնում սպորտի հետ կապված վեճերի հնարավոր քննության շուրջ քննարկումների վրա:

Առաջիկա քննարկումների նպատակն է ուսումնասիրել Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի ինտեգրման հնարավորությունը դառնալու Վեճերի լուծման պալատի ազգային մեխանիզմ՝ հատուկ սպորտային նյութական վեճերի լուծման համար (համաձայն FIFA 1010 շրջանակային կանոնակարգի):

Նկար 31. Հանդիպում սպորտի արդյունաբերության ներկայացուցիչների հետ

Այս գործընթացը սկսելու համար նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել իրականացնելու անհատական հանդիպումներ հիմնական մարզական սուբյեկտների, այդ թվում՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի, Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի, Հայաստանի թենիսի ֆեդերացիայի և տարբեր ֆուտբոլային ակումբների ներկայացուցիչների հետ:

XXIV. Արբիտրաժի վերաբերյալ ձեռնարկի մշակում[35]

Այս ամիսների ընթացքում մշակվել և հրատարակվել է արբիտրաժի վերաբերյալ համապարփակ ձեռնարկ: Ձեռնարկը ընթերցողին պատկերացում է տալիս արբիտրաժի և դրա ընթացակարգերի մասին: Ձեռնարկը հրատարակվում է հայերենով՝ դրանով իսկ օգնելով լրացնել հայերեն գիտական գրականության պակասը: Այն նպատակ ունի ոչ պրոֆեսիոնալ լսարանին ներկայացնել, թե ինչ է արբիտրաժը, դրա առավելությունները և ինչպես է այն գործում: Ձեռնարկը գիտական հետազոտություն չէ, այն նպատակ ունի մատչելի, ոչ մասնագիտական լեզվով ներկայացնել այն նվազագույն տեղեկատվությունը, որը գործարարներին և ոլորտով հետաքրքրված անձանց հնարավորություն կտա ընդհանուր պատկերացում կազմել Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի, Կենտրոնի կողմից ուսումնասիրված վեճերի շրջանակի, արբիտրաժային համաձայնագրերին ներկայացվող պահանջների, արբիտրաժային վճիռների կատարման կարգի և այն դեպքերի մասին, որոնցում ընդհանուր իրավասության դատարանները կարող են ներգրավվել կամ աջակցել արբիտրաժային դատավարությանը:

[35] Արբիտրաժ-ձեռնարկ.pdf (amca.am)

Նկար 32. «Արբիտրաժ. էությունը և իրականացման կարգը» ձեռնարկի կազմը

Ձեռնարկը փորձում է ոչ պրոֆեսիոնալ լսարանին տրամադրել համապարփակ ներածություն արբիտրաժի մասին՝ պարզաբանելով դրա աշխատանքը, առավելությունները ընդհանուր իրավասության դատարանների նկատմամբ և դրա վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների մեջ: Այն նախատեսված է ոչ թե որպես գիտական հետազոտական փաստաթուղթ, այլ որպես օգտագործողի համար հարմար ռեսուրս, որը մատչելի լեզվով փոխանցում է էական տեղեկատվություն: Առաջնային լսարանը ներառում է ձեռներեցների և անհատների, ովքեր ձգտում են հիմնարար պատկերացում կազմել Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի, դրա կողմից լուծվող վեճերի տեսակների, արբիտրաժային համաձայնագրերի հետ կապված պահանջների մասին:

Ձեռնարկը պատկերացումներ է տալիս արբիտրաժային որոշումների կատարման ընթացակարգերի և այն սցենարների մասին, որտեղ ընդհանուր իրավասության դատարանները կարող են ներգրավվել կամ աջակցել արբիտրաժային վարույթներին: օրինակ արբիտրաժային վճիռները չեղյալ ճանաչելու դիմումներով վարույթը, կատարողական թերթ տրամադրելու, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման և արբիտրաժին դատական աջակցության դիմումներով վարույթները:Վերջինս ներառում է մի շարք գործողություններ, ինչպիսիք են պահանջների կատարումը, արբիտրների նշանակումը, արբիտրների բացարկի որոշումը, արբիտրի լիազորությունների դադարեցման որոշումը, Արբիտրաժային տրիբունալի իրավասության վերաբերյալ վճիռը, ապացույցների հավաքագրմանն օժանդակելը և այլն: Ձեռնարկն այժմ գտնվում է անգլերեն թարգմանության փուլում:

XXV. <u>Կրթական ծրագրի մշակում</u>

ՀՀ փաստաբանների ակադեմիայի հետ համագործակցության շրջանակներում իրավաբանների համար մշակվել է «Միջազգային արբիտրաժ» թեմայով վերապատրաստման ծրագիր, որի նպատակն է աջակցել արբիտրաժի և փաստաբանության միջև փոխադարձ կապին՝ միաժամանակ նպաստելով

Հայաստանում արբիտրաժի զարգացմանը և ստեղծմանը: Դասընթացի ավարտին փաստաբանները կծանոթանան արբիտրաժին, արբիտրաժի առանձնահատկություններին, արբիտրաժով վեճերի լուծման նախադրյալներին, վճռի ճանաչմանը և կատարմանը, ինչպես նաև փաստաբանների մասնակցությանը արբիտրաժային գործընթացին և արբիտրաժ-իրավաբանություն փոխգործակցության հնարավոր հեռանկարներին: Կենտրոնը մշակել է նաև «Հաշտարարություն» ծրագիր իրավաբանների և իրավաբանական ֆակուլտետի ուսանողների համար: Դասընթացի ծրագրի ավարտին մասնակիցները կծանոթանան հաշտարարության գործընթացին և մասնավորապես՝ Հայաստանի իրավական համակարգում դրա ներդրման նպատակներին: ՀՀ փաստաբանների ակադեմիայի մարմինների կողմից հաստատվելուց հետո դրանք կընդգրկվեն կրթական ծրագրերում և կդասավանդվեն ԱՀՀԿ-ի կողմից:

XXVI. <u>ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՂԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻՆ</u>

1. <u>Միջազգային դատախաղի մասնակցության համաֆինանսավորում</u>

ԱՀՀԿ-ն համաֆինանսավորել է ԵՊՀ թիմի մասնակցությունը 31-րդ ամենամյա Vis International Moot Court-ին, որը տեղի կունենա Վիեննայում 2024 թվականի մարտին: Մասնավորապես, թիմի 5 անդամ և մեկ մարզիչ ստացել են կրթաթոշակ՝ իրենց ճանապարհածախսը (Երևան-Վիեննա-Երևան) և կացության ծախսերը հոգալու համար (մասնակի կացություն Վիեննայում): Ընտրվել է ԵՊՀ թիմը, քանի որ նրա թիմերը 2018թ.-ից սկսած 5 տարի շարունակ ներկայացնում են հաստատությունը և երկիրը միջազգային արբիտրաժային դատախաղերում: Տարիների ընթացքում թե՛ թիմի անդամները և թե՛ մարզիչներն ամեն ինչ արել են պատշաճ կերպով դատախաղերին մասնակցելու համար՝ մեծացնելով իրենց հաջողությունների հասնելու շանսերը և միևնույն ժամանակ նպաստելով արբիտրաժի և միջազգային մասնավոր իրավունքի լավ իմացությամբ մասնագետներ պատրաստմանը:

Միևնույն ժամանակ Երևանի պետական համալսարանի թիմերը ձևավորել են իրենց համալսարանի իմիջը՝ որպես դատախաղի մշտական և սպասված թիմերից մեկը ինչպես միջազգային մակարդակում, որը մասնակցում է Վիեննայի բանավոր փուլերին, այնպես էլ տարածաշրջանային մակարդակով՝ պարբերաբար մասնակցելով դատախաղի նախընտրական փուլին Թբիլիսիում, որը հիմնականում կազմակերպվում է Հարավային Կովկասի երկրների թիմերի համար: Հատկանշական

է, որ անցյալ տարի Թբիլիսիի նախնական մրցախաղի ժամանակ ԵՊՀ թիմը համարվում էր Հայաստանի լավագույն թիմը:

Նման միջոցառման համաֆինանսավորման նպատակն է խթանել արբիտրաժը ապագա իրավաբանների շրջանում, ինչպես նաև աջակցել հայկական թիմի մասնակցությանը միջազգային բարձր հարգանք վայելող մրցույթին: Willem C. Vis International Commercial Arbitration Moot-ը արբիտրաժային դատախաղի ամենամեծ մրցույթն է իրավաբան ուսանողների համար: Vis moot-ի նպատակն է խթանել ուսումնասիրությունը միջազգային առևտրային արբիտրաժի ոլորտում և խրախուսել բիզնես վեճերի լուծումը արբիտրաժի միջոցով: Դատախաղի խնդիրը, որպես կանոն, վերաբերում է միջազգային բնույթի առևտրային գործարքներին, որոնց նկատմամբ կիրառելի է ՄԱԿ-ի «Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին» կոնվենցիային և ներառում է նաև արբիտրաժի ընթացակարգային հարցեր, ինչպիսիք են իրավասությունը և արբիտրաժային տրիբունալի լիազորությունները: Դատախաղը բաղկացած է մինչև մրցույթի բանավոր փուլը գրավոր հուշագրեր ներկայացնելուց և՛ հայցվորի, և՛ պատասխանողի համար՝ չնայած նրան, որ գրավոր փաստարկները որևէ ազդեցություն չունեն բանավոր փուլի ո՛չ նախնական փուլերի, ո՛չ էլ նոկաուտ փուլերի վրա:

2. Հայաստանի ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից կազմակերպված դատախաղում որպես հաշտարար ծառայելը

Դեկտեմբերի 16-ին և 17-ին Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից կազմակերպվել է բանկային իրավունքի ամենամյա դատախաղ մրցույթը: Մրցույթին մասնակցում էին վեց թիմեր տարբեր բուհերից: ԱՀՀԿ փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյանը հրավիրվել է դատախաղ մրցույթում որպես հաշտարար (նախագահող հաշտարար): Արդյունքում նա նախագահում էր երկու մրցույթներ՝ տարբեր համալսարանների չորս թիմերի համար՝ նրանց հետադարձ խորհուրդներ տալով:

XXVII. Վերապատրաստման կազմակերպում ԱՀՀԿ աշխատակազմի համար[36]

Նկար 33. AMCA-ի աշխատակազմի վերապատրաստում, օր 1

Դեկտեմբերի 27-29-ը Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը վերապատրաստման դասընթաց է կազմակերպել իր անձնակազմի համար: Դասընթացը վարում էր բիզնես ռազմավարության և արդյունավետ հաղորդակցության մասնագետ, Հայաստանի Ամերիկյան համալսարանի դասախոս Սերգեյ Թանթուշյանը: Քանի որ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի աշխատակազմը նոր է, անհրաժեշտություն առաջացավ վերապատրաստում անցկացնել արդյունավետ հաղորդակցման, կոմպետենտ հետադարձ կապի, կոնֆլիկտների լուծման, ռացիոնալ որոշումների կայացման և այլ թեմաներով:

Երկօրյա վերապատրաստման ծրագիրը կենտրոնացած էր անհատական և մասնագիտական զարգացման տարբեր կողմերի վրա: Առաջին օրը նվիրված էր ինքնագիտակցության թեմային: Մասնակիցները տարբեր քննարկումների և խաղերի միջոցով, փորձում էին հասկանալ անձնական ուժեղ, թույլ կողմերը, արժեքները ճանաչելու կարողությունները: Քննարկման ընթացքում Սերգեյ Թանթուշյանը հատուկ ուշադրություն հրավիրեց հուզական ինտելեկտի վրա, քանի որ այն կարևոր է աշխատանքային միջավայրի համար: Այս մասում մասնակիցները լսեցին նաև թիմի մյուս անդամների ամենամեծ հաջողությունների ու վախերի մասին:

Երկրորդ օրը նվիրված էր որոշումների ռացիոնալ կայացմանը և կոնֆլիկտների լուծմանը: Այն ներառում էր որոշումների կայացման ռացիոնալ տեխնիկայի, արդյունավետ հաղորդակցման ռազմավարությունների, հետադարձ կապ տալու և ստանալու արվեստի և միջանձնային դինամիկայի մեջ ընկալման դերի վերաբերյալ մոդուլներ: Հետադարձ կապի քննարկման ընթացքում անձնակազմը նաև ունեցավ դերային խաղ, որն օգնեց նրանց ավելի լավ հասկանալու հետադարձ կապ տալու և

[36] Training Course for AMCA Staff - AMC

ստանալու գործընթացը: Հանդիպման մասնակիցները նաև տարաբնույթ վարժություններ ունեցան ընկալման վերաբերյալ, քանի որ, ինչպես նշեց Սերգեյ Թանթուշյանը, շատ կարևոր է հասկանալ ընկալման դերը կոնֆլիկտների կարգավորման գործընթացում:

Նկար 34. AMCA-ի աշխատակազմի վերապատրաստում, օր 2

Դասընթացը բավականին ինտերակտիվ էր, և մասնակիցները հնարավորություն ունեցան կիրառելու իրենց հմտությունները: Դերային խաղերի կիրառված տեխնիկաներից էր վեց գլխարկի մեթոդը, որի միջոցով մասնակիցները կիրառում էին որոշումներ կայացնելու և հետադարձ կապ տալու իրենց հմտությունները: Այս մեթոդը խրախուսում էր մասնակիցներին մոտենալ խնդիրներին տարբեր տեսանկյուններից՝ խթանելով ստեղծագործականությունը, քննադատական մտածողությունը և համատեղ խնդիրների լուծումը: Դերախաղի ընթացքում մասնակիցները քննարկեցին մի սցենար, ըստ որ Հայաստանում սկսում է գործել Սինգապուրի միջազգային արբիտրաժային կենտրոնի մասնաճյուղ և սկսեցին քննարկումներ այն քայլերի շուրջ, որոնք պետք է ձեռնարկի ԱՀՀԿ-ն շուկայում նման նոր, խոշոր մրցակից ունենալու դեպքում:

Ընդհանուր առմամբ, դասընթացն ապահովեց բազմակողմանի փորձ՝ մասնակիցներին զինելով գործիքներով և գիտելիքներով՝ ուղղված ինքնագիտակցության բարձրացմանը, որոշումներ կայացնելու կարողությունների զարգացմանը, հաղորդակցման և թիմային աշխատանք կատարելու հմտություններին: Բացի այդ դասընթացը նպաստեց թիմային աշխատանքի բարելավմանը:

ԳԼՈՒԽ 3

ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

XXVIII. PR ռազմավարության մշակում ԱՀՀԿ-ի համար

Քանի որ ԱՀՀԿ-ի գործունեության առաջին տարին է, և Կենտրոնի արդյունավետությունը կախված է հանրային իրազեկվածության և վստահության մակարդակից, կարևոր է բավարար ժամանակ և ջանքեր հատկացնել մասնագիտական և գրագետ իրազեկման քարոզարշավի մշակմանն ու կազմակերպմանը: PR ռազմավարությունները մշակվում են՝ ունենալով երկարաժամկետ նպատակներ, քանի որ դրա միջոցով սպառողի համար ստեղծվում և պահպանվում է ապրանքանիշի դրական համբավը: Այդ իսկ պատճառով բաց մրցույթի արդյունքներով ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքվել «Spring PR» ընկերության հետ, որը 2023 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացրել է լրատվամիջոցների մոնիտորինգ, ֆոկուս-խմբային քննարկումներ, շուկայի ուսումնասիրություն: Միաժամանակ տրամադրվել է խորհրդատվություն ԱՀՀԿ տեսանելիության, մարքեթինգի և ապրանքանիշի առաջմղման վերաբերյալ այն ժամանակահատվածում, երբ ռազմավարությունը դեռևս մշակված չէր: Օրինակ՝ PR ընկերությունն ընտրել է այն վայրերն ու միջոցները, որոնց միջոցով պետք է իրականացվի հանրային գովազդը (գովազդային լեդ էկրաններ, վահանակների համար նախատեսված վայրեր և այլն), ինչպես նաև եզրակացություն է տվել, թե որ հեռուստաալիքների միջոցով պետք է տարածվի ԱՀՀԿ-ի մասին ենթատեքստային տեղեկատվությունը:

Մշակվել և այժմ իրականացվում է PR ռազմավարությունը: Ռազմավարությունն արտացոլում է ԱՀՀԿ-ի հիմնական նպատակները և ցույց է տալիս այդ նպատակներին հասնելու հաղորդակցման հիմնական ուղիները: Այն ներառում է SWOT վերլուծություն, ապագայի վերաբերյալ առաջարկություններ և լրատվամիջոցների հետ աշխատելու խորհուրդներ: Ռազմավարությունը մշակվել է 3 տարի ժամկետով: Ընկերությունը պատասխանատու է առաջիկա 6 ամիսների ընթացքում ռազմավարության իրականացման և անհրաժեշտության դեպքում դրանում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համար՝ ապահովելով ռազմավարության արդյունավետությունն ու ծախսախնայումը:

XXIX. Սոցիալական գովազդի մշակում

ԱՀՀԿ-ն 2023 թվականի վերջին նկարահանել և հեռարձակել է 4 տեղեկատվական-ուսուցողական տեսահոլովակ: Տեսահոլովակների նպատակն է բարձրացնել ՎԱԼ-ի մասին իրազեկվածության մակարդակը և վստահություն ձևավորել քաղաքացիների շրջանում արբիտրաժային և հաշտարարության գործընթացների նկատմամբ:

Առաջին տեսանյութը արբիտրաժ հասկացության մասին է, որում ընդգծվում է դրա նշանակությունը ավանդական դատական համակարգերից դուրս վեճերի լուծման գործում:[37] Տեսանյութը բացատրում է արբիտրաժը որպես վեճերի լուծման այլընտրանքային մեթոդ՝ ցույց տալով թե ինչպես այն կարող է տարբերակ լինել տարբեր ոլորտների վեճերի համար, այդ թվում՝ շինարարության, տեղեկատվական տեխնոլոգիաների, ֆինանսական, մտավոր սեփականության, սպորտային, առևտրային վեճերի: Տեսանյութում ընդգծվում են արբիտրաժի առավելությունները, ինչպիսիք են դրա ճկունությունը, գաղտնիությունը և արդյունավետությունը՝ դատական վեճերի համեմատությամբ: Տեսանյութում մանրամասն ներկայացված է արբիտրաժային համաձայնությունը, արբիտրի ընտրության կարգը, ինչպես նաև արբիտրաժային վճռի էությունը: Տեսանյութը եզրափակվում է Կենտրոնի կարգախոսով, որն է. «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն՝ վեճերի լուծման ձեր գործընկերը»:



Նկար 35. Կադր առաջին հոլովակից

Երկրորդ տեսանյութը Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնին դիմելու գործընթացի համապարփակ ուղեցույց է:[38] Այն ընդգծում է Կենտրոնի ծառայությունների հարմարավետությունն ու մատչելիությունը՝ հնարավորություն տալով դիմորդներին հաշվարկելու ծախսերն անմիջապես ԱՀՀԿ-ի

[37] https://fb.watch/pu2g9XIpvM/
[38] https://youtu.be/wKMfFG9Opu4?si=34XyENSjZBo16edU



Նկար 36. Կադր երկրորդ հոլովակից

կայքում: Տեսանյութն ընդգծում է գործընթացի ճկունությունն ու մատչելիությունը՝ թույլ տալով դիմողին ընտրություն կատարել փաստաթղթերը անձամբ կամ էլեկտրոնային եղանակով Կենտրոն փոխանցելու միջև:

Ավելին, այն ընդգծում է Կենտրոն դիմողներին տրված ինքնավարությունը՝ ընտրելու իրենց նախընտրած արբիտրին, լեզուն և կիրառելի օրենքները: Տեսանյութը ներկայացնում է վեճերը լուծելու արդյունավետությունն ու արագությունը՝ ցույց տալով արբիտրաժը որպես ավանդական դատական գործընթացների համեմատ արագ և արդյունավետ այլընտրանք: Այսպիսով, այս տեսանյութի միջոցով մարդիկ կարող են հասկանալ ԱՀՀԿ-ին դիմելու ողջ գործընթացը՝ միևնույն ժամանակ ավելի տեղեկացված լինելով Կենտրոնի մասին:

Երրորդ տեսանյութը ներկայացնում է թե ինչ է հաշտարարությունը՝ ընդգծելով դրա դերը վեճերի լուծման գործում:[39] Այն սկսվում է հաշտարարության սահմանմամբ, այնուհետև տեսանյութում ներկայացվում է հաշտարարության կիրառելիությունը տարբեր սցենարներում՝ ուրվագծելով այն դեպքերը, երբ հաշտարարությունը կարող է շահավետ լինել: Տեսանյութում ընդգծվում է, որ հաշտարարությունը կարող է լուծել վեճերի լայն շրջանակ: Ավելին, տեսանյութը շեշտում է հաշտարարության ճկունությունը՝ ընդգծելով, որ այն կարող է իրականացվել ինչպես անձամբ, այնպես էլ առցանց հարթակների միջոցով: Տեսանյութը ներկայացնում է նաև այն հիմնարար սկզբունքները, որոնցով կարգավորվում է հաշտարարությունը՝ մատնանշելով կամավորությունը, գաղտնիությունը, կողմերի իրավահավասարությունը և հաշտարարի անաչառությունն ու անկախությունը: Տեսանյութում փոխանցված հիմնական ուղերձը

Նկար 37. Կադր երրորդ հոլովակից

39 https://fb.watch/pu2ctBjYD8/

հաշտարարության արդյունավետությունն է՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային մեթոդ: Այն ընդգծում է, որ հաշտարարությունը խնայում է ժամանակ և ռեսուրսներ՝ միաժամանակ պահպանելով լավ հարաբերությունները ներգրավված կողմերի միջև:



Նկար 38. Կադր չորրորդ հոլովակից

Չորրորդ տեսանյութը Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնում արբիտրաժային գործի վարույթի մասին է:[40] Այս տեսանյութում ներկայացված են բոլոր այն քայլերը, որոնք պետք է արվեն վարույթի բոլոր փուլերում՝ համաձայն Արբիտրաժային կանոնների: Հարկ է ընդգծել, որ քայլերը ներկայացված են մատչելի ձևով, որպեսզի հասկանալի լինեն բոլորի համար:

XXX. <u>Առցանց իրազեկման արշավի անցկացում</u>

Տեսանելիության քարոզարշավի շրջանակներում սոցիալական մեդիան մեծ դեր խաղաց ԱՀՀԿ-ն ավելի հանրաճանաչ դարձնելու և արբիտրաժի և հաշտարարության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման գործում: Սոցիալական ալիքների միջոցով ԱՀՀԿ-ն ոչ միայն հետևողականորեն թարմացումներ է տրամադրել հանրությանը, այլև մշտական կապի մեջ է եղել իր շահառուների և պոտենցիալ հաճախորդների հետ: Հիմնական ալիքներն էին ԱՀՀԿ-ի պաշտոնական կայքը, Facebook, LinkedIn և Instagram էջերը:

Ընդհանուր առմամբ, անցած 4 ամիսների ընթացքում ԱՀՀԿ-ն FB-ում և Instagram-ում կատարել է 70 գրառում՝ հասնելով համապատասխանաբար 317.855 և 243.538 օգտատերերի, ռիլերը դիտել են համապատասխանաբար 44.297 և 70.500 օգտատերեր: FB-ում տեսանյութերը դիտել է ավելի քան 210.000 օգտատեր: Վերլուծությունը ցույց է տալիս, որ FB-ի հետևորդների մոտ 40%-ը 25-44 տարեկան օգտատերեր են, և նրանց մեծամասնությունը կանայք են: Ինչ-որ առումով FB էջը ծառայում նաև որպես հարթակ կայքի առաջխաղացման համար. մոտ 4.300 մարդ այցելել է ԱՀՀԿ կայք FB-ի միջոցով: 193 օգտատեր ստացել է իրենց հուզող հարցերի պատասխանները՝ գրելով մեր FB էջին: ԱՀՀԿ սոցիալական ցանցերում պահպանվել է 110 գրառում: Պաշտոնական կայքում կատարվել է 97 հրապարակում:

[40] https://youtu.be/Kyitbwtv_Lo?si=PbjHfaJFqm5QZ3JS

ԱՀՀԿ-ն բավականաչափ մեդիա լուսաբանում է ունեցել նաև LinkedIn-ում: Հաշիվն ունի ավելի քան 400 հետևորդ և հայտնվել է 100 որոնումներում: Միայն դեկտեմբերին ԱՀՀԿ-ի էջ է այցելել ավելի քան 220 օգտատեր:



Նկար 39. Ֆեյսբուքի և ինստագրամի reach վերլուծությունը



Նկար 40. Ֆեյսբուքի և ինստագրամի հետևորդների վերլուծությունը

XXXI. Գովազդի տեղադրում

Հիմք ընդունելով PR ռազմավարությունը և նպատակ ունենալով բարձրացնել Կենտրոնի ճանաչելիությունը՝ ԱՀՀԿ-ն Երևանի տարբեր մասերում տեղադրել է տեղեկատվական պաստառներ, գովազդային տեսանյութեր և այլ վիզուալներ: Վահանակները մեծ դեր են խաղացել ԱՀՀԿ-ի և դրա գործունեության խթանման գործում: Ընտրված վայրերն են 1. Երևանի բանուկ փողոցները և 2. պաստառները Արշակունյանց փողոցում, որտեղ գտնվում է ԱՀՀԿ գրասենյակը: Բաններները և գովազդային տեսանյութերը տեղակայվել են 1 ամիս ժամկետով: Տեսանյութերի տևողությունը եղել է 15 վայրկյան և հեռարձակվել են 4 որպեն մեկ անգամ, ամեն օր, 1 ամիս: Մասնավորապես, գովազդային տեսանյութերը հեռարձակվել են լեդ էկրանների միջոցով հետևյալ հասցեներով.



Նկար 41. AMCA-ի գովազդային վահանակները

- Հյուսիսային պողոտա 1;
- Աբովյան-Սայաթ Նովա խաչմերուկ;
- Խանջյան-Սայաթ Նովա խաչմերուկ;
- Արշակունյաց-Գրիգոր Լուսավորիչ խաչմերուկ;
- Մյասնիկյան-Հերացի լեդ էկրան:

Գովազդային պաստառները տեղադրվել են հետևյալ հասցեներով.

- Արշակունյաց պողոտա 31
- Արշակունյաց պողոտա 39

«News.am» կայքում տեղադրվել է նաև էլեկտրոնային վահանակը: Էլեկտրոնային բանները տեղադրվել է դեկտեմբերի 15-ին 1 ամիս ժամկետով, և միայն դեկտեմբերի երկրորդ կեսին այն արդեն ուներ 584,241 դիտում:



Նկար 42. AMCA-ի էլեկտրոնային վահանակը news.am կայքում

XXXII. Ռադիո հարցազրույց[41]

Դեկտեմբերի 15-ին ԱՀՀԿ տնօրեն Տաթևիկ Մատինյանը հյուրընկալվել էր Գործարար Ալիք FM106.5 ռադիոյի «Ժողովրդի բարեկամ» հաղորդաշարին: Տաթևիկ Մատինյանը և հարցազրուցավար Հրանտ Սարկիսովը խոսեցին արբիտրաժային ընթացակարգերի մասին, թե ինչպես դրանք կարող են օգնել մարդկանց ավելի լավ տնօրինել իրենց ժամանակը և ինչպես կարող է արբիտրաժը բարելավել իրավական համակարգի արդյունավետությունը:

Տաթևիկ Մատինյանը նշեց, որ Կենտրոնը հիմնադրվել է Հայկական բարեգործական ընդհանուր միության, Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Օրենսդրության զարգացման կենտրոնի կողմից: Նա ընդգծեց, որ Կենտրոնի ստեղծմանն ուղղված աջակցությունն իրականացվել է Հայաստանում դատաիրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության շրջանակներում, և Կենտրոնը հիմնադրվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:



Նկար 43. Տաթևիկ Մատինյանը ռադիո հարցազրույցի ժամանակ

[41] Նոր ինստիտուտ. Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն. «Ժողովրդի ընկեր» (youtube.com)

Հարցազրույցի ընթացքում Հայկ Սարկիսովը հարցեր է ուղղել Արբիտրաժային խորհրդի անդամների, շահագրգիռ կողմերի, արբիտրաժային գործընթացի, դատական համակարգի ծանրաբեռնվածության և այլ թեմաների վերաբերյալ: Անդրադառնալով շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների մասին հարցին՝ Տաթևիկ Մատինյանը նշեց, որ այս հանդիպումներն օգնում են կողմերին հասկանալ, թե ինչու են կողմերը երկուստեք կարևոր միմյանց համար: Նա նշեց, որ շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների ժամանակ ներկայացվել է, թե ինչ ծառայություններ է մատուցում Կենտրոնը և որքան կարևոր է արբիտրաժը ներառել իրենց պայմանագրերում՝ որպես վեճերի լուծման կարևոր մեթոդ:

Հարցազրույցի ընթացքում Տաթևիկ Մատինյանն անդրադարձել է նաև արբիտրաժի առավելություններին՝ ընդգծելով ժամանակի խնայողության, վեճի գաղտնիության և պրոֆեսիոնալ մասնագետների դերը: Հայկ Սարկիսովն ամփոփել է հարցազրույցը՝ ընդգծելով արբիտրաժային գործընթացում անաչառության և թափանցիկության կարևորությունը:

XXXIII. <u>Մեդիա լուսաբանման նյութի մշակում և հեռարձակում 4 մուլտիպլեքսային հեռուստատեսությունների միջոցով</u>

Այս ամիսների ընթացքում ԱՀՀԿ-ն համագործակցել է 4 մուլտիպլեքսային հեռուստատեսությունների հետ, ինչը թույլ է տվել հաստատել վստահություն, հասնել ավելի լայն լսարանի, կրթել հանրությանը և ներգրավել շահագրգիռ կողմերին:

Դեկտեմբերի 25-ին, ժամը 21:00-ին և դեկտեմբերի 26-ին՝ ժամը 09:00-ին, Հանրային հեռուստաընկերությունը հաղորդում է հեռարձակել Կենտրոնի գործունեության, կազմակերպված միջոցառումների և դասընթացների մասին:[42] Մասնավորապես, խոսվել է դեկտեմբերի 25-ին տեղի ունեցած միջոցառման մասին, որը նվիրված էր արբիտրաժի ոլորտում օրենսդրական բացերի քննարկմանը: Հաղորդումն ունեցել է մոտ 380 դիտում YouTube-ում և 1400 դիտում Facebook-ում: Հաղորդման ընթացքում ԱՀՀԿ տնօրեն Տաթևիկ Մատինյանը նշել է, որ արբիտրաժի զարգացումը երկրում հրամայական է: Անդրադառնալով օրենսդրական բացերի քննարկմանը՝ Տաթևիկ Մատինյանն ընդգծել է, որ քննարկման նպատակն է ստեղծել աշխատանքային խումբ, որը հետագայում կաշխատի օրենսդրական բարեփոխումների փաթեթի վրա՝ հասնելու օրենսդրական փոփոխություններին և բարելավելու արբիտրաժային միջավայրը մեր երկրում: ԱՀՀԿ փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյանը նշել է, որ շատ կարևոր է անդրադառնալ այնպիսի հարցերի, ինչպիսիք

[42] https://www.youtube.com/watch?v=QT56cvgt_ps

են էլեկտրոնային ծանուցումները, հեռակոնֆերանսների անցկացումը, ինչն արդիական է և արդեն իսկ միջազգային պրակտիկա է մի շարք երկրներում:

Նկար 44. Կադր Հ1-ի ռեպորտաժից

Նկար 45. Կադր ԿենտրոնԹիվի-ի ռեպորտաժից

Դեկտեմբերի 4-ին և 5-ին ժամը 09.00-ին, 11.00-ին, 15.00-ին և 20.00-ին «Կենտրոն» հեռուստաընկերությունը ռեպորտաժ է ցուցադրել արբիտրաժի ընթացքի, Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի հիմնադրման մասին և անդրադարձել է նաև բիզնեսի ներկայացուցիչների համար անցկացված վերապատրաստմանը: Հաղորդումն ունեցել է 27000 դիտում Facebook-ում և 12 դիտում YouTube-ում:[43] Զեկույցի ընթացքում ԱՀՀԿ նախագահ Տաթևիկ Մատինյանն ընդգծել է հաշտարարության և արբիտրաժի դերը և նշել, որ ԱՀՀԿ-ն իրականացնում է հաշտարարություն արտոնագրված հաշտարարների միջոցով, իսկ արբիտրաժը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային արբիտրների միջոցով: ԱՀՀԿ արբիտրաժային խորհրդի անդամ Աիդա Ավանեսյանն իր ելույթում ընդգծել է արբիտրաժի դերը առևտրային վեճերի դեպքում, սակայն հույս է հայտնել, որ վեճերի քննարկումը հետագայում աստիճանաբար կընդլայնվի՝ ներառելով նաև մյուս ոլորտները: «Օրենսդրության զարգացման կենտրոն»-ի փոխտնօրեն Դավիթ Ղարիբյանն ընդգծել է, որ իրենց նպատակն է, որ այս ոլորտի ներկայացուցիչները հասկանան, որ դիմելով ԱՀՀԿ՝ կունենան վեճերի արդյունավետ լուծում: ԱՀՀԿ փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյանն ամփոփելով նշել է, որ եթե պահանջի չափը կազմում է մինչև 5 մլն դրամ, ապա կառույցը, օրինակ՝ ԱՀՀԿ-ն, կարող է հայցն ուղղակիորեն ուղարկել հարկադիր կատարման ծառայություն: Այսինքն՝ մինչև 5 միլիոն հայցերի վերաբերյալ վճիռները Կենտրոնը պարզապես կարող է ինքնուրույն կատարել՝ դրանք ուղարկելով հարկադիր կատարողական ծառայություն:

[43] https://fb.watch/pt8TPdXf1S/

Դեկտեմբերի 11-ին ժամը 22:00-ին, և դեկտեմբերի 12-ին՝ ժամը 10:00-ին, «Արմենիա» հեռուստաընկերությունը ռեպորտաժ է հեռարձակել Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի և վերջինիս կողմից դատավորների և արբիտրների համար կազմակերպված վերապատրաստման մասին:[44] Հաղորդումն ունի 6000 դիտում Facebook-ում և 141 դիտում YouTube-ում: Հաղորդման ընթացքում «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի ղեկավար Տիգրան Դադունցը նշեց, որ վերապատրաստումները կարևոր են հանրության համար, որպեսզի արբիտրաժի մասին քննարկումները խորթ չլինեն, նաև նշեց, որ միևնույն ժամանակ անհրաժեշտություն կա նաև նեղ մասնագիտական վերապատրաստումների: Հարցազրույցի ընթացքում Իտալիայի արբիտրաժային ասոցիացիայի ղեկավար Անդրեա Կարլեվարիսը խոսեց դասընթացի ընթացքում իր ելույթի մասին՝ նշելով, որ ներկայացրել է արբիտրաժային վարույթում պետական դատարանների դերը, միջազգային արբիտրաժի հայեցակարգն ու դերը, մեթոդները, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելը և դրա իրականացման կարգը: Լոնդոնի Քինգս քոլեջի դասախոս Հայկ Կուպելյանցը հավելեց, որ նման հանդիպումներն ու վերապատրաստումները օգտակար են, քանի որ այդ հանդիպումների միջոցով կողմերը հասկանում են, թե ինչ է արբիտրաժը, ինչպես է գործում այն և ինչպես ճիշտ վարել արբիտրաժային գործունեություն:

Նկար 46. Կադր ԱրմենիաԹիվի-ի ռեպորտաժից

Նկար 47. Կադր ՖրինյուզԹիվի-ի ռեպորտաժից

Հաջորդիվ ԱՀՀԿ-ի և նրա գործունեության մասին ռեպորտաժ էր պատրաստել FreeNews հեռուստաընկերությունը, որը եթերում եղել է դեկտեմբերի 18-ին՝ ամբողջ օրվա ընթացքում:[45] Հաղորդումը Կենտրոնի դերի և նոր կայքի գործարկման մասին էր: Հաղորդման ընթացքում ԱՀՀԿ նախագահ Տաթևիկ Մատինյանը շեշտեց Կենտրոնի անկախության կարևորությունը, քանի որ անկախության գործոնը կարևոր է ցանկացած արբիտրաժային կենտրոնի համար: ԱՀՀԿ փոխտնօրեն Լիլիթ

[44] https://www.youtube.com/watch?v=VCcAL3IRYQw
[45] https://www.youtube.com/watch?v=Ltw6LK5buyc

Պետրոսյանը նշեց, որ արբիտրաժային խորհրդում ընդգրկված են ինչպես տեղական, այնպես էլ միջազգային փորձագետներ, ովքեր հեղինակություն ունեն արբիտրաժում:

Այս հաղորդումներից բացի, «Կենտրոն», «Free News» և «Bun TV» հեռուստաընկերությունները հեռարձակել են նաև ԱՀՀԿ-ի տեղեկատվական տեսանյութերը: Դեկտեմբերի 1-ից տեսանյութերը հեռարձակվում են FreeNews և Կենտրոն հեռուստաընկերություններով՝ օրը 6 անգամ, իսկ Bun TV հեռուստաընկերությամբ՝ 3 անգամ:

ԳԼՈՒԽ 4

ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

XXXIV. ԱՀՀԿ-ի անդամակցությունները

Փորձագետների, ռեսուրսների և ուղեցույցների գլոբալ ցանցերին հասանելիություն ունենալու, վեճերի լուծման պրակտիկաների առաջխաղացմանը նպաստելու համար ԱՀՀԿ-ն իր գործունեության այս փուլում որոշել է դառնալ Առևտրային արբիտրաժի միջազգային խորհրդի (ICCA) և Առևտրի միջազգային պալատի Հայաստանի ազգային կոմիտեի (ICC) անդամ: Միանալով այս կազմակերպություններին՝ մենք բարձրացնում ենք մեր դիրքը միջազգային արբիտրաժային համայնքում՝ ձեռք բերելով արժեքավոր պատկերացումներ և համագործակցության հնարավորություններ՝ միաժամանակ տեղեկացված լինելով արբիտրաժային ընթացակարգերի և չափանիշների վերջին զարգացումներից:

Անդամակցություն ICCA-ին

ԱՀՀԿ-ն ICCA-ին է միացել 2023 թվականի նոյեմբերի 29-ին: ICCA-ը ձգտում է նպաստել և բարելավել արբիտրաժի և միջազգային վեճերի լուծման այլ ձևերի կիրառումը իր միջազգային կոնգրեսների, առաջատար հրապարակումների, իրազեկման ծրագրերի և հետազոտական նախագծերի միջոցով: ICCA-ն անդամակցության վրա հիմնված կազմակերպություն է, որը ղեկավարվում է վեճերի լուծման 40 հայտնի մասնագետներից բաղկացած միջազգային Կառավարման խորհրդի կողմից և ներկայումս ունի անդամներ 95 երկրներից:

Այս անդամակցությամբ, ԱՀՀԿ-ի անդամակցությունը ICCA-ին ունի հետևյալ առավելությունները.

- ցուցակագրում ICCA-ի առցանց անդամների և ամենամյա տպագրվող անդամների ցուցակագրերում:[46]
- 10% զեղչ ICCA տարեգրքի, ձեռնարկի և կոնգրեսի շարքի համար (www.kluwerarbitration.com կայքի միջոցով):

[46] Membership Directory (arbitration-icca.org)

- 10% զեղչ ICCA-ի երկամյա կոնգրեսին և ICCA-ի այլ միջոցառումներին մասնակցելու համար:
- նորությունների պարբերական ստացում և կանխավ ծանուցում առաջիկա իրադարձությունների և միջոցառումների վերաբերյալ:
- ICCA-ի կայքում հասանելիություն միայն անդամների համար նախատեսված նախադիտումների և այլ բացառիկ նյութերի:

ԱՀՀԿ-ն դիտարկել է ICCA-ին անդամակցությունը, քանի որ այն հանդիսանում է արբիտրաժի նշանավոր գլոբալ ցանց, որը հարթակ է համագործակցության, գիտելիքների փոխանակման և վեճերի լուծման լավագույն փորձի փոխանական համար: ICCA-ի կազմում լինելը հնարավորություն է տալիս օգտվել հարուստ փորձից, ռեսուրսներից և գիտելիքներից, ինչպես նաև կոնֆերանսների, հրապարակումների և ցանցերի միջոցով նպաստում շարունակական ուսուցմանը և աճին: ICCA-ը նաև արժեքավոր հարթակ է համաշխարհային առաջատար մասնագետների, գիտնականների և հաստատությունների հետ կապվելու համար՝ զարգացնելով այնպիսի կապեր, որոնք կարող են արբիտրաժի ոլորտում հանգեցնել համագործակցության և առաջընթացի: Սա շատ կարևոր է ԱՀՀԿ-ի համար, քանի որ այն ոչ միայն տեղական, այլ նաև միջազգային արբիտրաժային հաստատություն է:

Անդամակցություն ICC-ին

2023 թվականի դեկտեմբերին ԱՀՀԿ-ն դարձավ Առևտրի միջազգային պալատի ազգային կոմիտեի անդամ, որն ունի առաքելություն՝ նպաստելու Ազգային կոմիտեների միջև համագործակցության և գործարար հարաբերությունների ամրապնդմանը, օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավվելուն:
Կազմակերպությունն ունի 12 հանձնաժողով, և ԱՀՀԿ-ն առաջադրել է իր աշխատակազմի 5 անդամ հետևյալ հանձնաժողովներում՝ Տաթևիկ Մատինյան՝ արբիտրաժ և ՎԱԼ, Լիլիթ Պետրոսյան՝ բանկային գործ, Նորայր Բաղդասարյան՝ թվային տնտեսություն, Մարիամ Մելիքյան՝ էներգետիկա և շրջակա միջավայր, և Վարդան Լաբլաջյան՝ մարքեթինգի և գովազդի հանձնաժողով: Հանձնաժողովներն ունենում են հանդիպումներ, որոնք թույլ են տալիս ավելի լավ հասկանալ այս հաստատության աշխատանքային ողջ գործընթացը և տեղեկանալ համաշխարհային ICC աշխարհի վերջին տեղեկություններին:

ԱՀՀԿ-ն կարևոր համարեց ICC-ին անդամակցությունը, քանի որ ICC-ն աշխարհի ամենացանցային բիզնես կազմակերպությունն է, որը ներգրավում է ավելի քան 45 միլիոն ընկերությունների ավելի քան 170 երկրներում, դրա զբաղվածության

ընդհանուր ծավալը կազմում է ավելի քան 1 միլիարդ մարդ: Իսկ մեզ՝ որպես արբիտրաժային հաստատության, ICC-ի մաս դառնալը բազմաթիվ առավելություններ է ապահովում: Նախ, ICC-ին անդամակցությունը միջազգային մասշտաբով ապահովում է արժանահավատություն և ճանաչում՝ խթանելով վստահությունը արբիտրաժային ծառայություններ փնտրող ձեռնարկությունների շրջանում: Երկրորդ, ICC ցանցի մաս լինելը հասանելիություն է տալիս նրա լայնածավալ ռեսուրսներին և փորձին: ICC-ի ազգային կոմիտեի մաս դառնալը հնարավորություն է տալիս ներգրավվել տեղական միջոցառումներին, հանդիպումներին և նաև լինել միջազգային հանրության մաս, քանի որ ICC-ին ինտեգրումը ռազմավարական հնարավորություն է մեզ համար որպես ոչ միայն տեղական, այլև միջազգային արբիտրաժային հաստատություն՝ բարձրացնելու մեր կարգավիճակը, ստանալու ռեսուրսներ և ընդլայնելու մեր կարողությունները համաշխարհային գործարար համայնքին ծառայելու հարցում՝ իհարկե վեճերի արդյունավետ լուծման միջոցով:

Ընթացիկ հարցումներ

Բացի վերոնշյալ կազմակերպություններից, մենք դիմել ենք նաև Լոնդոնի Միջազգային արբիտրաժային դատարանի անդամ դառնալու համար և հուսով ենք հնարավորինս շուտ միանալ այս կարևոր արբիտրաժային կազմակերպությանը:

XXXV. <u>Միջազգային շրջագայություններ և այցելություններ</u>

ԱՀՀԿ-ի համար կարևոր նշանակություն ունի միջազգային միջոցառումներին և համաժողովներին մասնակցությունը: Այն ոչ միայն բացում է ցանցային նոր հնարավորություններ, այլև ծառայում է որպես գիտելիքների փոխանակման, ուսուցման և մասնագիտական զարգացման ընդլայնման հարթակ: Ըստ էության, միջազգային միջոցառումներին և համաժողովներին մասնակցությունը կարևոր է, որպեսզի ԱՀՀԿ-ն իրազեկված լինի արբիտրաժի և հաշտարարության դինամիկ և անընդհատ զարգացող ոլորտից: Այն նաև հնարավորություն է տալիս ներգրավել նոր արբիտրներ և հաշտարարաներ և արդյունավետ պլանավորել ԱՀՀԿ-ի հետագա գործունեությունը: Ահա այն հիմնական միջազգային միջոցառումներն ու համաժողովները, որոնց մասնակցել է ԱՀՀԿ անձնակազմը.

Ուզբեկական արբիտրաժային շաբաթ, Տաշքենդ[47]

Նկար 48. Ուզբեկական արբիտրաժային շաբաթ

ԱՀՀԿ փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյանը սեպտեմբերի 10-15-ը մասնակցել է Տաշքենդում անցկացված ուզբեկական արբիտրաժային շաբաթվան: Արբիտրաժային շաբաթը ներառում էր միջազգային արբիտրաժին առնչվող տարբեր հարցերի քննարկումներ և փորձի փոխանակում այնպիսի միջազգային արբիտրաժային կենտրոնների ներկայացուցիչների հետ, ինչպիսիք են Ուզբեկստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Պակիստանի, Մարոկոյի և HKIAC կենտրոնները:

Միջոցառման ընթացքում Լիլիթ Պետրոսյանը ներկայացրել է ԱՀՀԿ-ն, նրա հիմնական նպատակներն ու թիրախները, ինչպես նաև միջազգային արբիտրաժային կենտրոնների ներկայացուցիչների հետ քննարկել ԱՀՀԿ գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր:

Միջազգային արբիտրաժային փառատոն, Էդինբուրգ

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի տնօրեն Տաթևիկ Մատինյանը սեպտեմբերի 22-ին Էդինբուրգում մասնակցեց «Միջազգային արբիտրաժային փառատոնին»: Միջոցառմանը ներկա էին այնպիսի հեղինակավոր փաստաբաններ, ինչպիսիք են Էնդրյու Մաքենզին, լորդ Գլենին, Լիզ Բոսմանը և Բրենդոն Մելոնը: Նրանք ողջունեցին մասնակիցներին և ընդգծեցին արբիտրաժի կարևորությունը՝ ընդգծելով դրա ներկայիս մարտահրավերները:

[47] https://amca.am/amca-in-uzbek-arbitration-week/

Նկար 49. AMCA-ի տնօրեն Տաթևիկ Մատինյանը Էդինբուրգի արբիտրաժային փառատոնի ժամանակ

Բանախոսները ներկայացրեցին *«Շրջակա միջավայրի, սոցիալական և կառավարման ազդեցությունը միջազգային արբիտրաժային հանրության վրա»* թեման՝ ընդգծելով բնապահպանական, սոցիալական և կառավարչական հարցերի առանցքային դերը արբիտրաժի հետագա զարգացման վրա:

Քննարկվել են հետևյալ հարցերը.

- Բանավեճեր, թե արդյոք ոչ իրավաբանները պետք է ներգրավվեն արբիտրաժում,
- Ոլորտի զարգացման գործում անձնակազմի ներգրավման կարևորությունը,
- Արհեստական բանականության զարգացումը:

Բանախոսները հստակ ընդգծեցին, որ պահանջ կա, որ արբիտրաժային կենտրոնները դառնան ավելի թափանցիկ, կրթությունը և նոր սերնդի զարգացումը լինեն հիմնական ուղղություններ կենտրոնների համար:

Քննարկումը վարում էր Ջասթին Դ'Ագոստինոն, ով մտահոգություն հայտնեց, որ թվային հարթակների ավելի նախընտրելի դառնալու հետ մեկտեղ տվյալների վերահսկման և կառավարման հարցերը դառնում են ավելի ու ավելի կարևոր:

Հարավարևելյան Եվրոպայի արբիտրաժային համաժողով, Վիեննա[48]

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի տնօրեն Տաթևիկ Մատինյանը մասնակցել է *«Հարավարևելյան Եվրոպայի արբիտրաժային համաժողովին»:* Համաժողովը մեկնարկել է 2023 թվականի հոկտեմբերի 12-ին՝ Վիեննայում:

[48] https://amca.am/the-director-of-amca-participated-in-the-arbitration-events-in-vienna/

Համաժողովի առաջին օրը բացման խոսքով հանդես եկավ պրոֆեսոր Քրիստոֆեր Շերուերը՝ անդրադառնալով ներդրումային արբիտրաժի ներկա մարտահրավերներին և քննարկելով ապագա զարգացումները:

Այնուհետև պանելային քննարկումների ընթացքում խոսվեց արբիտրաժային որոշումների կատարման նրբությունների և աշխարհաքաղաքական փոփոխություններով պայմանավորված նոր մարտահրավերների մասին: Այս քննարկումները ներառում էին տարբեր երկրներում արբիտրների հանդիպած դժվարությունները և ուսումնասիրեցին ապագայի հնարավոր լուծումները:

GAR LiveVienna

Վիեննա գործուղման երկրորդ օրը Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի տնօրեն Տաթևիկ Մատինյանը մասնակցեց GAR Live Vienna-ին, որտեղ այս տարի քննարկվեցին մրցակցային իրավունքի և արբիտրաժի, միջազգային արբիտրաժներում փորձագետների անկախության և անկողմնակալության միասնական չափանիշների առկայության անհրաժեշտության, երրորդ կողմի ֆինանսավորման ազդեցությունը միջազգային արբիտրաժի վրա հարցերը:

Նկար 50. AMCA-ի տնօրեն GAR LiveVienna միջոցառման ժամանակ

Ավստրիայի արդարադատության նախարար Ալմա Զադիչը իր բացման խոսքում նշեց նաև, որ պետության համար կարևոր է արհեստական բանականության առավելությունների կիրառումը իրավաբանական մասնագիտության մեջ, սակայն նա ընդգծեց, որ չի հավատում, որ արհեստական բանականությունն այս փուլում կարող է փոխարինել իրավաբաններին: Լոնդոնի Քինգս քոլեջի իրավունքի պատվավոր

պրոֆեսոր Ռիչարդ Ուիշ Ք.Ք.-ն շատ հետաքրքիր ելույթ ունեցավ արբիտրաժի և մրցակցային իրավունքի կոնկրետ կապի, այդ ոլորտում դատական զարգացումների վերաբերյալ:

Շատ հետաքրքիր քննարկում ծավալեց «Ինչ կանեիր դու» խորագրով նիստի ընթացքում, որտեղ մասնակիցներին հենց սկզբում հարցրել են՝ կողմ են, թե դեմ են փորձագիտական անկախության միասնական չափանիշներին: Ձայները եղել են գրեթե 50/50, սակայն տարբեր երկրների 4 սցենարների քննարկումից հետո վերջնական քվեարկությունը ցույց է տվել, որ լսարանի 74%-ը բավականին վստահ է, որ կա միասնական ստանդարտի խիստ պահանջարկ:

Նման միջոցառման առանձնահատկությունն ու կարևորությունն այն է, որ ինչպես տեսական, այնպես էլ գործնական խորհուրդներ են տրվում առաջատար համալսարանների դասախոսների և աշխարհահռչակ գործող մասնագետների կողմից տարբեր երկրներում առկա զարգացումների վերաբերյալ:

Դուբայի արբիտրաժային շաբաթ, Դուբայ[49]

Նոյեմբերի 13-ից 15-ը ԱՀՀԿ տնօրեն Տաթևիկ Մատինյանը մասնակցել է Դուբայի արբիտրաժային շաբաթին: Արբիտրաժային շաբաթվա ընթացքում տեղի ունեցավ մոտ 100 միջոցառում, որին ներկա էր 6 մայրցամաքներից մասնակիցներ: Միջոցառման առաջին օրը նա մասնակցել է «*Մտածելով վերջնական վճռից անդին. հասնել արդյունավետ ձեռքբերումների Միջազգային արբիտրաժում*» պանելային քննարկմանը, որն ունեցել է երկու մաս: Առաջին մասի ընթացքում մասնակիցները քննարկել են արբիտրաժային մարտահրավերներին վերաբերող հարցեր: Արդյունավետ քննարկումներ եղան հարգարժան բանախոսներ Khawar Qureshi KC-ի, Ayman Merdas-ի, Ian Casewell-ի, Tom Evans-ի և David Hunt-ի հետ:

Նոյեմբերի 14-ին Տաթևիկ Մատինյանը մասնակցել է «*Պատժամիջոցների ազդեցությունը արբիտրաժի վարման վրա. գործնական խնդիրներ*» պանելային քննարկմանը: Բանախոսներն անդրադարձան պատժամիջոցների ռեժիմների ազդեցությանը ենթարկված միջազգային արբիտրաժային վարույթների անցկացմանը վերաբերող հրատապ հարցերին: Նրանք խոսեցին այն գործիքների և տարբերակների մասին, որոնք կարող են օգնել նվազագույնի հասցնել պատժամիջոցների բացասական ազդեցությունը, կազմակերպել անկողմնակալ և անկախ դատարանի ձևավորում և ապահովել դատավարության սահուն և արդյունավետ անցկացումը՝ սկսած արբիտրաժի հարուցումից մինչև արբիտրաժի վճռի կատարումը:

[49] https://amca.am/tatevik-matinyan-participated-in-the-dubai-arbitration-week/

Շատ արդյունավետ էր «*Դուբայի միջազգային արբիտրաժային կենտրոնը և ամերիկյան արբիտրաժային ասոցիացիան*» պանելային քննարկումը: Դուբայի միջազգային արբիտրաժային կենտրոնի տնօրեն Ջեհադ Քազմիի և Ամերիկյան արբիտրաժային ասոցիացիայի նախագահ և գործադիր տնօրեն Բրիջդ ՄակՔորմակի բացման ելույթներից հետո երկու պանելային քննարկումներում մասնակիցները քննարկեցին կայուն արբիտրաժին, արբիտրաժային ինստիտուտների դերին և միջազգային արբիտրաժում գործերի արդյունավետ կառավարմանը:

Այնուհետև Տաթևիկ Մատինյանը մասնակցեց «*Arbitration Across Generation* պանելային քննարկմանը, որը միտված էր ուսումնասիրելու, թե ինչպես կարող է տարբեր սերունդների համագործակցությունն ազդել արբիտրաժի վրա:

Հարկ է ընդգծել, որ Տաթևիկ Մատինյանը հանդիպում է ունեցել նաև ԱՀՀԿ Արբիտրաժային խորհրդի անդամ Թոմաս Սնայդերի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ԱՀՀԿ կանոնների վերաբերյալ մի շարք հարցեր:

Տեղի ունեցան գործնական քննարկումներ նաև «Դատարանի դերը անվտանգ արբիտրաժային նստավայր կառուցելու գործում. կոլեգիալության հեռանկարները» SIAC-ի (Սինգապուրի միջազգային արբիտրաժային կենտրոնի) կոնֆերանսի ժամանակ: SIAC կոնֆերանսի առաջին նիստում քննարկվել է արբիտրաժի և հաշտարարության համակցումը: Երկրորդ նիստը նվիրված էր SIAC-ի արբիտրաժային կանոնների փոփոխություններին: Մասնավորապես, քննարկվել են SIAC-ի նոր կանոնների նորարարական մոտեցումները: Դուբայի արբիտրաժային շաբաթը շատ արդյունավետ և օգտակար միջոցառում էր, որից ԱՀՀԿ-ն բազմաթիվ տեսական և գործնական խորհուրդներ է քաղել:

Նկար 51. AMCA-ի տնօրեն Տաթևիկ Մատինյանը և Կենտրոնի արբիտրաժային խորհրդի անդամ Թոմաս Սնայդերը Դուբայի արբիտրաժային շաբաթվա ընթացքում

GAR Live: Կանայք արբիտրաժում, Փարիզ[50]

ԱՀՀԿ տնօրեն Տաթևիկ Մատինյանը և փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյանը մասնակցել են դեկտեմբերի 7-ին Փարիզում կայացած «*GAR Live. Կանայք արբիտրաժում*» միջոցառմանը: Միջոցառմանը ելույթ ունեցողների թվում էին միջազգային արբիտրաժային կառույցների նախկին և ներկա ղեկավարներ, ինչպես նաև հայտնի միջազգային իրավաբանական գրասենյակների գործընկեր իրավաբաններ:

Նկար 52. AMCA-ի տնօրեն Տաթևիկ Մատինյանն ու փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյանը GAR Live: Կանայք արբիտրաժում միջոցառման ժամանակ

Քննարկումները կենտրոնացած էին միջազգային արբիտրաժում առկա մարտահրավերների, կանանց ներգրավվածության խթանման գործիքների, արբիտրաժի կիրառման հետ մեկտեղ ընդլայնվող ESG (բնապահպանական, սոցիալական և պետական կառավարում) պարտավորությունների, ինչպես նաև հանքարդյունաբերության ոլորտում արբիտրաժի կիրառման ընթացիկ միտումների և մարտահրավերների վրա:

Հանդիպում Ֆրանսիայի Հանրապետությունում
Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպանի հետ

Ֆրանսիայի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում տիկին Մատինյանը և տիկին Պետրոսյանը Փարիզում հանդիպել են Ֆրանսիայի Հանրապետությունում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Հասմիկ Տոլմաջյանի հետ:

[50] https://amca.am/gar-live-women-in-arbitration-event-in-france/

Հանդիպման ընթացքում տիկին Մատինյանը ներկայացրել է նորաստեղծ արբիտրաժային կենտրոնի առանձնահատկությունները և ընդգծել նմանատիպ միջազգային կենտրոնի կարևորությունը Հայաստանի Հանրապետությունում ներդրումային միջավայրի բարելավման համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանում արբիտրաժի և հաշտարարության զարգացման գործում ֆրանսաբնակ հայ իրավաբանների ներուժի ներգրավման կարևորությունը:

Նկար 53. AMCA-ի տնօրեն Տաթևիկ Մատինյանը և փոխտնօրեն Լիլիթ Պետրոսյանը Ֆրանսիայի Հանրապետությունում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Հասմիկ Տոլմաջյանի հետ հանդիպման ժամանակ

Հաշտարարության ոլորտում տարածաշրջանային համագործակցություն, Թբիլիսի[51]

Նկար 54. Իգոր Միրզախանյանը և Վրաստանի հաշտարարների միության նախագահ Իրակլի Կանդաշվիին

2023 թվականի դեկտեմբերի 20-ին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում տեղի ունեցավ Հաշտարարության ոլորտում տարածաշրջանային համագործակցության առաջին միջազգային համաժողովը: Համաժողովին մասնակցում էր ԱՀՀԿ հաշտարարության գործով կառավարիչ Իգոր Միրզախանյանը:

Համաժողովի ընթացքում քննարկվել են իրավական դաշտը, սկզբունքները և տարածաշրջանի երկրներում առկա մարտահրավերները՝ կապված հաշտարարության՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմի հետ: Իգոր Միրզախանյանը ներկայացրել է ԱՀՀԿ-ի՝ որպես մշտական հաշտարարական հաստատության մոտեցումները և ոլորտի զարգացման տեսլականը:

[51] https://amca.am/regional-cooperation-on-mediation-conference-was-held-in-tbilisi-georgia/

Մասնակիցները քննարկել են նաև տարածաշրջանում հաշտարարության ինստիտուտի զարգացման հնարավորությունները և դիտարկել համատեղ ծրագրերի իրականացման և հետագա համագործակցության հեռանկարները: Համաժողովը կազմակերպվել է Վրաստանի հաշտարարների ասոցիացիայի կողմից՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և Գերմանիայի աջակցությամբ:

XXXVI. ԱՀՀԿ դրույթների ներառում պայմանագրերում

ԱՀՀԿ-ի կամ այլ մարմինների կողմից կազմակերպված տարբեր հանրային կամ մասնավոր միջոցառումների ժամանակ ԱՀՀԿ-ն խորհուրդ է տվել փաստաբաններին, բիզնեսներին և տարբեր ընկերություններին, թե ինչպես մշակել արդյունավետ արբիտրաժային համաձայնագիր (պայմանագիր): Ավելին, ԱՀՀԿ-ն ներկայացրել է իր արբիտրաժային և հաշտարարության դրույթները, որոնք պետք է օգտագործվեն գործը ԱՀՀԿ-ին փոխանցելու համար: Արդյունքում, ավելի քան 200 աշխատանքային, վաճառքի, ծառայությունների մատուցման, մատակարարման, շինարարության և այլ պայմանագրերում ԱՀՀԿ-ն նշված է որպես այդ պայմանագրերից բխող վեճերի լուծման հաստատություն: Արբիտրաժային դրույթների օրինակը կարելի է գտնել ԱՀՀԿ-ի կայքում[52], որը կողմերին հնարավորություն է տալիս օգտագործել դրույթները և մշակել արդյունավետ արբիտրաժային համաձայնագրեր:

XXXVII. ԱՀՀԿ-ի ներկայացում միջոցառումների ժամանակ

Հոկտեմբերի 27-29-ը Երևանում տեղի ունեցավ Հայաստանի իրավաբանների համաժողովը, որը կազմակերպել էր Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը: 31 երկրներից ավելի քան 250 հայ իրավաբաններ մասնակցել են համագումարի «*Հայաստանը և աշխարհը. պաշտպանել մեր իրավունքները արտերկրում և տանը*» թեմայով նիստերին: Համագումարի նպատակները եղել են զարգացնել կապերն ու համագործակցությունը Հայաստանի և Սփյուռքի հայ իրավաբանների միջև և քննարկել հայրենիքին և սփյուռքին վերաբերող կարևոր իրավական հարցեր: Բացի այդ, համագումարը նպատակ ուներ ուսումնասիրել մասնագետների ներգրավման հնարավորությունները և ստեղծել համագործակցության օրակարգ:

[52] https://amca.am/arbitration/

Հայ իրավաբանների համաժողովի առաջին պանելային քննարկմանը ելույթ ունեցավ ԱՀՀԿ տնօրեն Տաթևիկ Մատինյանը:

Իր ելույթի ընթացքում տիկին Մատինյանն ընդգծեց արբիտրաժի առավելությունները, մասնավորապես՝ վեճերի լուծումը մասնագիտացված արբիտրների կողմից հնարավորինս սեղմ ժամկետներում: Արբիտրները նշանակվում են վիճող կողմերի կողմից: Արբիտրները կարող են լինել աշխարհի ցանկացած երկրից, քանի որ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը հնարավորություն է ընձեռում ամբողջ արբիտրաժային գործընթացը իրականացնել հեռավար:

Խոսելով Հայաստան-Սփյուռք համագործակցության մասին՝ Կենտրոնի տնօրենը նշեց, որ ԱՀՀԿ-ն նման համագործակցության լավագույն օրինակն է, քանի որ Կենտրոնի երեք հիմնադիրներից երկուսը հայկական սփյուռքի ներկայացուցիչներ են՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Իրավաբանների հայկական միությունը: Կենտրոնի աշխատանքներում որպես արբիտրներ և փորձագետներ ներգրավված են բազմաթիվ հայ մասնագետներ աշխարհի տարբեր երկրներից: Տաթևիկ Մատինյանը հատուկ շնորհակալություն է հայտնել Սփյուռքի հանձնակատարի գրասենյակին՝ այս կարևոր միջոցառումը կազմակերպելու համար և վստահություն հայտնել, որ մեր հայրենակիցների մասնագիտական փորձի փոխանակումը հայաստանյան իրենց գործընկերների հետ կարող է նպաստել ոլորտի ինստիտուցիոնալ զարգացմանը:[53]

Նկար 55. AMCA-ի տնօրեն Տաթևիկ Մատինյանը հայ իրավաբանների համաժողովի ժամանակ

Համաժողովի երկրորդ օրը նշանավորվեց հայկական սփյուռքի ներուժը Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու

[53] Հայաստանի իրավաբանների ասամբլեան հանուն Հայաստանի - AMC (amca.am)

գործում օգտագործելու շուրք քննարկումներով: Նիստին մասնակցեց նաև Տաթևիկ Մատինյանը: Նիստի ողջ ընթացքում հնչող առանցքային հարցերից մեկը հայաստանյան դատարաններում վեճերի լուծման երկարատև գործընթացների մշտական մարտահրավերն էր: Նա կրկին նշեց, որ ԱՀՀԿ-ն կօգնի լուծել այս խնդիրը: Տիկին Մատինյանը վերահաստատեց Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի հանձնառությունը՝ այս խնդիրներին անդրադարձ կատարելու և լուծելու համար: Նա նաև ընդգծեց այն առանցքային դերը, որ կարող են ունենալ հայկական սփյուռքի իրավաբաններն ու իրավաբանական հաստատությունները արբիտրաժային ինստտուտի հաջող ներդրման գործում: Ավելին, նա ընդգծեց ԱՀՀԿ-ի միջազգային ճանաչումը տարբեր հարթակներում բարձրացնելու կարևորությունը:[54]

Նկար 56. Հայ գործարարների ասոցիացիա ՀԿ-ի անդրադարձը AMCA-ին

2023 թվականի դեկտեմբերին Հայ գործարարների ասոցիացիա ՀԿ-ի[55] գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում: Հանդիպմանը կարևորվել են ԱՀՀԿ-ի հետ համագործակցության հիմնական ուղղությունները և համագործակցության կարևորությունը: Հանդիպման արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց կազմակերպել մի շարք հանդիպումներ տարբեր բիզնեսների ներկայացուցիչների հետ: Ավելին, ՀԿ-ն վստահեցրել է, որ իրենք կօգտագործեն իրենց բոլոր հնարավոր հարթակները՝ տեղեկատվություն տարածելու արբիտրաժի և հաշտարարության կարևորության և ԱՀՀԿ կողմից մատուցվող ծառայությունների մասին:

[54] Սփյուռքի դերը Հայաստանի իրավական զարգացումներում - AMC (amca.am)
[55] Հայ գործարարների ասոցիացիա | armassociation.com